

3-4(642-643)

10.02.2022

Հրատարակվում է  
1999թ. սեպտեմբերից

Ճանաչել գիմաստությունն եւ գիտարար, իմանալ զբանս հանճարոյ

# ԼՍՏԱՐԱՐ

Лусарар

ԿՐԹԱԳԻՏԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԹԵՐԹ

Lusarar

## ՈՒՍ ՈՒՍԻ ՏԱՆՈՎ՝ ԱՄՈՒՐ ԿԱՆԳԵՆ ՄԱՅՐ ՀՈՂԻՆ

Սկսած 1988 թվականից տարբեր տարբերակով փետրվար ամիսն ընդգծվել է հիշարժան իրադարձություններով, որոնք պիտի որ ուսանելի դասեր դառնալին մեզ համար:

1988-ի փետրվարի 13-ին Ստեփանակերտում անցկացվեց ԽՍՀՄ-ում թերևս նախադեպը չունեցած՝ հզոր հանրահավաք, որտեղ առաջին անգամ քաղաքական խնդիրներ առաջադրվեցին երկրի իշխանություններին: Մեկ շաբաթ անց տեղի ունեցավ ԼՂԻՄ մարզխորհրդի պատմական նստաշրջանը, որտեղ Արցախի ժողովրդի ընտրյալները օրակարգ ձևավորեցին Հայկական ԽՍՀ-ին վերամիավորվելու վերաբերյալ: Եվս երկու օր անց Աղդամից բազմահազարանոց ազերական հրոսակախույժը հարձակվեց Ասկերան ավանի վրա, որի հետևանքով եղան վիրավորներ, իսկ ադրբեջանական կողմից երկու հոգի կասկածելի պայմաններում սպանվեց: Առավել ծանրը փետրվարի 26-29-ին էր, երբ Սոււմգայիթ քաղաքում կազմակերպվեց խորհրդային «ինտերնացիոնալիզմի» գաղափարներից բնավ չբխող՝ հայ ազգաբնակչության դաժան սպանողն ու արտաքսույնը:

Այս ամենի օրինաչափ շարունակությունը լայնածավալ պատերազմն էր, որի տրամաբանական մի դրվագն էլ Խոջալու գյուղի ազատագրումը դարձավ 1992-ի փետրվարի 26-ին: Խոջալուի ռազմագործողությունն ուշագրավ է նրանով, որ փոքրաթիվ ու անհամեմատ թույլ զինված հայ ինքնապաշտպանական ջոկատները կարողացան ոչնչացնել ամիսներ շարունակ շրջակա հայկական բնակավայրերի վրա մահ սփռող թշնամական ուղեղ:

Ի՞նչ ուսանելի դասեր տվեց մեզ փետրվարը: Անշուշտ, առաջինը միասնության դասն է, որովհետև ժողովրդի համախմբմամբ մեկնարկեց ու թափ առավ Արցախյան հզոր շարժումը՝ Արցախ-Հայաստան-Սփյուռք եռուստիակա հաստատականությանը ռազմատոններ արձանագրելով պարտադրված պատերազմում: Բացի այդ, շեշտվեց հայ մարտիկի անպարտելիությունը զինական միջոցներով իրեն բազմիցս զերազանցող հակառակորդի հանդեպ: «Ուժն է ծնունդը» կարգախոսը առասպելաբանական խորիմաստությամբ արմատավորվեց հայի գիտակցության մեջ՝ մղելով նոր սխրանքների:

Մենք ուժեղ էինք, այո, և կար հետագա հաղթանակներ կռելու լավատեսությունը: Մարե՞լ է հիմա այդ լավատեսությունը, տրոհվե՞լ է համազգային միասնության խորհուրդը... Բնավ, ոչ: Պիտի հասկանանք ու ընդունենք, որ հաղթանակները կարող են փոխարինվել պարտություններով, եթե տեր չկանգնես քո նվաճումներին: Իսկ նորից հաղթելու համար անհրաժեշտ է վերադասարանել ոգու ուժը: Մենք այդ ճանապարհին ենք. դանդաղ, բայց և կայունորեն շտկում ենք մեր մեջքը, բռունցքով են մեր մկանուտ ափերը, և մեր հայացքի դեմ կրկին պարզվում է հույսի հորիզոնը: Մեզ մնում է կրկին միասնական դառնալ, ուս ուսի տալով՝ ոտքերով ամուր կանգնել մայր հողին այնպես, որ այդ ռազմապարհից «թշնամու պալատի պատերն օրորվեն»:

Դա է մեզ հուշում Փետրվարի անթեկանելի խորհուրդը:

«ԼՍՏԱՐԱՐ»

## ԱՇ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԸ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԿԳՄՍՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻՆ



ԱՇ նախագահի ս. թ. փետրվարի 7-ի հրամանագրով ԱՇ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Ղարախանյանը ազատվել է զբաղեցրած պաշտոնից՝ իր դիմումի համաձայն և նշանակվել է Նախագահի խորհրդական: Նախագահի մեկ այլ հրամանագրով ԱՇ ԿԳՄՍ նախարար է նշանակվել Անահիտ Հակոբյանը:

Փետրվարի 8-ին ԱՇ պետնախարար Արտակ Բեգլարյանը ԱՇ ԿԳՄՍ աշխատակազմին է ներայացրել նորանշանակ նախարարին:

Ա. Բեգլարյանը երկրի ղեկավարի և իր անունից շնորհակալություն հայտնեց Լ. Ղարախանյանին կատարած մեծ աշխատանքի համար՝ ընդգծելով, որ 1994-ից ի վեր ամենամեծ ժամանակաշրջանը այս ոլորտները կառավարելու առումով բաժին է հասել նրան. պատերազմ, թովիղ, ետպատերազմյան դժվարություններ, որ նախարարի գլխավորությամբ հաղթահարել է համակարգը: «Ես միանշանակ կարող եմ ասել, որ բավականին արդյունավետ աշխատանք է կատարվել առաջին հերթին պատերազմի հետևանքները վերացնելու ուղղությամբ, հետո նաև՝ հետագա բարեփոխումների հիմքերը դնելու և մեկնարկը տալու առումով»: Պետնախարարը տեղեկացրեց ԱՇ նախագահի մեկ այլ հրամանագրի մասին. Արցախի Հանրապետությանը մատուցած ծառայությունների համար ԱՇ ԿԳՄՍ նախարար Լուսինե Ղարախանյանը պարգևատրվել է «Վաչագան Բարեպաշտ» մեդալով: Ա. Բեգլարյանը նրան հանձնեց բարձր պարգևը:

ԱՇ նախագահի կրթության և գիտության գծով Լ. Ղարախանյանի խորհրդական լինելը նշանակում է, որ նա հեռու չի լինելու ոլորտից և շարունակելու է զբաղվել կրթությանը և գիտությանն առնչվող հարցերով, լինելու է համակարգի կողքին և իր փորձով նպաստելու է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտների զարգացմանը, համոզված է պետնախարարը:

Ա. Բեգլարյանը նաև բարի ընթացք է հաջողություններ մարտնչում նորանշանակ նախարար Ա. Հակոբյանին՝ սնանապես ընդգծելով, որ բավական

մին պատասխանատու ժամանակում նա պետք է իրականացնի իր ծառայությունը և համոզված է, որ երկար տարիների նրա մանկավարժական, ինչպես նաև ղեկավարման փորձը կարևոր դերակատարություն կունենա համակարգի կառավարման և ծառայած մարտահրավերները հաղթահարելու գործում:

Ելույթ ունենալով՝ Լ. Ղարախանյանը շնորհակալություն



մաններում: Մենք դատապարտված ենք եղել շարունակել աշխատել՝ ինքնապաշտպանության, մշակույթի, սպորտի ոլորտների կորուստները՝ մարդկային և նյութական:

Այնուհանդերձ, մեզ հաջողվել է կյանքի կոչել բազմաթիվ ծրագրեր, ինքնակազմակերպվել, մեկտեղել մեր բարոյական, հոգևոր ու ինտելեկտուալ ներուժը և շարունակել մեր ըն-

Նախարարի պաշտոնը նաև հայտնի և հզոր մարդկանց հետ արդյունավետ ու բազմաշերտ շփումների ու համագործակցության մեծ աշխարհ է: Ցավոք, առնչվեցի նաև մարդու նվաստ տեսակին՝ պատեհապաշտ, եսասեր և անպատասխանատու, անհամեստ ու չարախոս, որը մեր տաճարը փորձում է ներսից քանդել:

«...Հորդորս՝ գիտակցաբար ու միական կերտենք հանգամանքները, որպեսզի չհայտնվենք արժեհամակարգի գահավիժող պարույրում»:

Լ. Ղարախանյանը շնորհավորեց իրեն փոխարինած Ա. Հակոբյանին՝ մշելով, որ հավատում է, որ նա հզոր թիմի հետ իր պրոֆեսիոնալիզմի և մարդկային որակների շնորհիվ կարողանալու է առաջ տանել համակարգը: Իսկ ինքը՝ ոչ միայն որպես Նախագահի խորհրդական կրթության և գիտության գծով, այլև ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Աշոտ Սարյանի կողմից նշանակված ԳԱԱ ներկայացուցիչ Արցախում, ընդգծված աջակցություն կցուցաբերի գիտական արժեքների ստեղծմանը:

Նորանշանակ նախարար Ա. Հակոբյանը շնորհակալություն հայտնեց այս բարդ իրավիճակում իրեն մեծ առաքելություն վստահելու համար և հավաստիացրեց, որ մեծ թիմի օժանդակությամբ ամենայն պատասխանատվությամբ կփորձի իրականացնել իր գործառնությունները և համակարգը պահել արժանի տեղում:

Երախտագիտության և բարեմարտանքի խոսք ասացին նաև ԿԳՄՍ փոխնախարարներ Սիբայել Համբարձումյանը և Գայանե Գրիգորյանը:

Վերջում պետնախարար Ա. Բեգլարյանն ասաց, որ մոտալուտ ժամանակում աշխատանքային խմբով կհավաքվեն և կքննարկեն համակարգի հիմնախնդիրները, նախարարության անելիքները: Հորդորեց առաջնորդվել ոչ թե իրար հետ ինչ-որ բան կիսելու, այլ իրար հետ ամբողջականացնելու, իրար հետ ավելացնելու սկզբունքով: Դա պետք է լինի յուրաքանչյուրի և մեր ազգային վարքագիծը:

Սեփ. լրատվություն



հայտնեց երկրի նախագահին՝ այն բացառիկ հնարավորության համար, որ ընձեռվել է իրեն մոտ լինելու ժողովրդին և մտնելու ժողովրդի մեջ, պատասխանատու պաշտոնը վստահելու համար, որն իր համար ոչ միայն գաղափարների, նախաձեռնությունների, մտափոխումների իրականացման մեծ հնարավորություն էր, այլև իրական փորձության ճանապարհ: Նաև շնորհակալություն՝ գործընկերներին, համակարգի աշխատողներին. «Սա ժողովրդին ծառայելու և ժողովրդին մոտ գտնվելու եզակի հնարավորություն էր՝ տիեզերական ու բարձրագույն պարունակների զգացողություններով:

Աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային հարափոփոխ միջավայրում, անվտանգային համակարգերի դեգրադացման պարագայում, երբ բռնությունն ու ահաբեկումը շարունակվում են լեզիտիմ շարունակվում են լեզիտիմ մեջ դառնում է ցպահանջ, հանրակրթության և գիտության ոլորտի կարևորագույն որոշումների ընդունումը՝ խիստ պատասխանատու: Մեր համատեղ աշխատանքն ընթացել է խիստ անսովոր պայ-

թացքը: 44-օրյա պատերազմի ընթացքում և ցայսօր ոգեղեն կենսունակությամբ հաղթահարել ենք համակարգի առջև ծառայած խնդիրները: Հենց այդ ոգեղենության մեջ են տեսնում մեր համատեղ աշխատանքի երկարաժամկետ հեռանկարը, մեր համազգային արժանապատվությունն ու հպարտությունը:

Մերնդին դաստիարակելու, կրթելու և արժեքներ փոխանցելու շաղախը ձեր ձեռքերով է հունցվում, և գալիքը փրկող ջահակիրները դուք եք:

Կշարունակեն աշխատել ԱՇ նախագահի խորհրդականի պաշտոնում՝ աջակցելով կրթագիտական համակարգին:

Ինքնաշեն, ինքնակերտ, ինքնաբավ. սա է Արցախի կրթագիտական համակարգի իմ տեսլականը, և ես այն կդարձնեմ հայրենիքը կառուցելու իմ պարտադրվածը:

ԸՆԹԱՅՔ

# ՄԻ ԽՈՒՄԲ ՄԱՐԶԻԿՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻՉՆԵՐ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ ԱՆ ԵԱԽԱԳԱՅԻ ԿՈՂՄԻՉ



Արցախի Հանրապետության նախագահի նստավայրում հունվարի 29-ին տեղի է ունեցել 2021 թվականին միջազգային և հայաստանյան հարթակներում մրցանակային տեղեր զբաղեցրած արցախցի մարզիկների պարգևատրման արարողություն:

Ինչպես հայտնում են Արցախի Հանրապետության նախագահի աշխատակազմի տեղեկատվության գլխավոր վարչությունից, նախագահ Հարությունյանը գրանցած հաջողությունների առթիվ շնորհավորել է Արցախի մարզիկներին՝ նշելով, որ նրանք մեծապես նպաստում են մեր հանրապետությունում սպորտի զարգացմանն ու աշխարհում մեր երկիրն արժանիորեն ներկայացնելու գործին: Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի զարգացման, մարզական հերթափոխի պատրաստման գործում ունեցած ավանդի համար նախագահ Հարությունյանը ոլորտի մի խումբ ներկայացուցիչների համընդունաբար, ինչպես նաև Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի ու Վաստակավոր մարզչի կոչումների վկայականներ:

Երկրի ղեկավարը բոլոր պարգևատրվածներին նորանոր հաջողություններ է մաղթել ու ընդգծել, որ հանրապետության իշխանությունները շարունակելու են հատուկ ուշադրության կենտրոնում պահել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտը՝ անհրաժեշտ պայմաններ ստեղծելով այդ բնագավառի զարգացման համար:



ԹՈՂ ՀԱՂԹԵԼՈՒ ԶԳՏՈՒՄԸ ԼԻՆԻ ԱՆՆԱՐԱՆՉ

Հունվարի 29-ին Ստեփանակերտի Խաչատուր Աբովյանի անվան հ.1 հիմնական դպրոցում պարգևատրվել են սպորտի ոլորտի մի խումբ ներկայացուցիչներ: Պարգևատրումը կատարել է ԱՀ ԿԳՄՍ նախկին նախարար Լուսինե Ղարախանյանը:

Նա նշել է, որ սպորտը համազգային ուրախություն պարգևող բնագավառ է. «Ես սպորտի պոտենցիալը շոշափել եմ 44-օրյա պատերազմի ընթացքում և հետո, երբ հասկացել եմ, որ այս ոլորտից պատերազմին մասնակցել և իրենց կյանքն են զոհել 40, վիրավորվել՝ 30 մարզիկներ: Սպորտը ինքնակազմակերպվածության, նպատակասլաց, հետևողական, սկզբունքային լինելու, կամքը կոփելու ամենավաճ միջոցն է: 44-օրյա պատերազմից հետո սպորտի բնագավառի նվաճումներն աննախադեպ են եղել, որը պայմանավորված է պատերազմի հետևանքներով: Ես համոզված եմ, որ 2022 թվականը իր ցուցանիշներով գերազանցելու է 2021 թվականին»:

Պարգևատրության մասնակից, Ավանդական կարատեի Հայաստանի Հանրապետության առաջնությունում առաջին տեղ գրաված Տիգրան Գևորգյանը շնորհակալություն է հայտնել ուշադրության արժանանալու համար. «Հետպատերազմյան այս սուղ պայմաններում, երբ ունենք զոհեր, ավերված տնտեսություն, տեղահանված բնակչություն, ԱՀ կառավարության կողմից պատշաճ ուշադրության է արժանանում սպորտի ոլորտը: Դա էլ ավելի է պարտավորեցնում մեզ, որպեսզի ամենքս ոգով և խղճով առաջնորդվենք»:

«Թող 2022-ին շատանան համազգային հպարտության առիթները, իսկ հաղթելու ձգտումը լինի աննահանջ», - ասել է Լ. Ղարախանյանը:

# ՏՐՎԵՑ ԱՐՑԱՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԵԿՆԱՐԿԸ



2022թ. հունվարի 29-ը Արցախի գիտական կենտրոնի (ԱԳԿ) կյանքում կնշվի որպես հիշարժան օր. տրվեց Կենտրոնի գիտահետազոտական աշխատանքի առաջին կիրառական արդյունքի՝ «Նարինե +» կաթնաթթվային արտադրանքի մեկնարկը: Արտադրանքի բացման արարողությանը ներկա էին ԱՀ պետական նախարար Արտակ Բեգլարյանը, ԿԳՄՍ նախարար (արդեն նախկին) Լուսինե Ղարախանյանը, ԱԳԿ գիտաշխատողներ:

Արցախյան կաթնաթթվային բուժիչ և դիետիկ մթերքի տեղում արտադրությունը հնարավոր է դարձել «Հայ կենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի կողմից Արցախի գիտական կենտրոնում լաբորատորիա ստեղծելու, այն բանկարծեք սարքավորումներով հագեցնելու և գիտաշխատողների երկարատև ջա-



նադիր աշխատանքի արդյունքում: Այս մասին իր բացման խոսքում նշեց ԱԳԿ տնօրեն Անյուտա Սարգսյանը՝ երախտագիտություն հայտնելով այդ ամենում ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանին՝ ցուցաբերած նախանձախնդիր աջակցության համար:

Արտադրանքի բացումը կատարեցին ԱՀ ԿԳՄՍ նախկին նախարար Լ. Ղարախանյանը և ԱԳԿ տնօրեն Անյուտա Սարգսյանը:

ԱԳԿ գիտության գծով փոխտնօրեն Արև Իսրայելյանը, որը կանգնած է եղել այս արտադրանքի ստեղծման հիմքում, ներկայացրեց «Նարինե +»-ի բուժիչ և կանխարգելիչ հատկությունները: Այն Հայաստանում արտադրվող հայտնի «Նարինե» կաթնաթթվային և արցախյան էնդեմիկ կաթնաթթվային բակտերիաների մաքուր շտամներով



ստանդեսադիքային տրակտի տարբեր խանգարումների դեպքում: Ինչո՞ւ խառնուրդ, որովհետև այսօր աշխարհում ընդունված են բազմաբաղադրիչ ֆունկցիոնալ կաթնամթերքները. մեկից ավելի շտամների խառնուրդը թույլ է տալիս բարձրացնել ինչպես տվյալ արտադրանքի ազդեցությունը մանրէների վրա, այնպես էլ որոշ հիվանդությունների բուժման դեպքում: Հունքը Արցախի տոհմակայանի անարատ կաթը և բակտերիալ մակարոն են՝ ստացված վերը նշված երկու բակտերիաների հիման վրա:

Արտադրանքի հզորությունը օրական 300 բաժակ կաթնամթերք է, սակայն սկզբնական շրջանում կարտադրվի մինչև 100 բաժակ: Հանրության կողմից պահանջարկի մեծացմանը զուգընթաց կընդլայնվի արտադրանքի ծավալը, տեղեկացրեց ԱԳԿ տնօրենը: Կաթնամթերքը կվաճառվի Ստեփանակերտի խոշոր դեղատներում:

ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը շնորհավորեց ԱԳԿ կողմից գիտական առաջին կիրառական արդյունքի ստացման հա-

մար՝ շնորհակալություն հայտնելով գիտական հետևողական աշխատանքի համար. «Մեծ գործ է արված, և ուրախալի է, որ մեր գիտնականների ուժերով է հնարավոր եղել հասնել այս հաջողությանը»:

ԱՀ ԿԳՄՍ նախկին նախարար Լ. Ղարախանյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ ԳԱՍ նախագահ Աշոտ Սաղյանին՝ Արցախի գիտական կենտրոնի աշխատանքները նոր ուղու վրա դնելու համար. «2022-ը գիտական նոր պատուհանի տարի է լինելու: ՀՀ-ում արդեն սկսել է ֆինանսավորվել կիրառական գիտությունը: Արցախի իշխանություններն էլ պատրաստ են նույնն անել: Բայց միայն ֆինանսավորումը բավարար չէ: Մենք պետք է պարոն Սաղյանի հետ կարողանանք ճիշտ տեսլական մշակել, թե ինչ ենք անում և որ ոլորտի համար ենք անում: Աշխարհը հիմա ղեկավարում է գիտությունը: Ես հավատում եմ, որ հիմա մենք ստեղծելու ենք այնպիսի գիտական վերջնարդյունք, որով կկարողանանք երաշխավորել մեր անվտանգությունը»:

Արցախի գիտական կենտրոնի արտադրանքի առաջնեկի շնորհավորումն այնուհետև շարունակվեց կենտրոնի գիտական միստերի դահլիճում՝ «Նարինե +»-ի համատեսն սեղանի շուրջը:

Արտադրանքի իրացումից ստացված եկամուտը կուղղվի Արցախի գիտական կենտրոնի զարգացմանը, արտադրանքի ծավալի մեծացմանը, տեղեկացրեց ԱԳԿ տնօրեն Անյուտա Սարգսյանը:



ԱՍՏՈՒՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

«ՄԵՆՔ ԿԱՆՉՈՒՆ ԵՆՔ ՄԵՐ ԼԵՈՒՆԵՐԻ ՊԵՍ»



Հունվարի 28-ին Ստեփանակերտի հ. 3 միջնակարգ դպրոցի դահլիճում անցկացվեց Աստուծոյի հանրապետական հերթական մրցույթը՝ նվիրված Հայոց բանակի 30-ամյակին՝ «Մենք կանգուն ենք մեր լեռների պես» խորագրով:

Ավանդույթ դարձած մրցույթը խնդիր ունի մատաղ սերնդի ուշադրությունը բերել հայ գրականությանն ու պոեզիային, նպաստել աշակերտների հայրենասիրական դաստիարակությանը, ազգային ինքնագիտակցության ու արժանապատվության ամրապնդմանը:

Մրցույթին մասնակցել են շրջանային փուլը հաղթահարած հանրակրթական դպրոցների աշակերտներ և ՄՊՍԿ-ների սաներ: Մասնակիցները հանդես են եկել երկու տարիքային խմբերով՝ 9-12 և 13-16 տարեկաններ:

9-12 տարեկանների խմբում առաջին պատվավոր տեղին է արժանացել Գոռ Հայրապետովը (Ստեփանակերտի հ.6 հիմն. դպրոց), երկրորդ տեղում Արարատ Առաքելյանն է (Շուշիի ՄՊՍԿ), իսկ մրցանակային երրորդ տեղում՝ Մարիամ Հայրապետյանը (Շուշիի Խ.Աբովյանի անվ. դպրոց):

13-16 տարեկանների խմբում առաջին տեղում Առֆի Հովսեփյանն է (Չլդրանի միջն. դպրոց), երկրորդ մրցանակային տեղը զբաղեցրել է Նարեկ Բաբայանը (Նորագյուղի միջն. դպրոց), իսկ երրորդ տեղը՝ Բենիամին Հայրապետյանը (Ստեփանակերտի հ.11 ավագ դպրոց):

Առաջինից երրորդ տեղեր գրաված և խրախուսական տեղեր զբաղեցրած մասնակիցները Արցախի Հանրապետության կրթության,



գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից պարգևատրվել են դիպլոմներով ու խրախուսական նվերներով:

Խրախուսական նվերներ ստացան նաև մրցույթի ամենափոքր (8տ.) և հեղինակային ստեղծագործություններով հանդես եկած մասնակիցները:

«Շնորհակալություն մեր ուսուցիչներին և աշակերտներին, որ հնարավորություն ընձեռեցին ըմբռնվելու մեր բազմախարուստ հայ գրականության անմահ գոհարները, հնարավորություն տվեցին կրկին հպարտություն ապրել, որ հայ ենք, որ ունենք մեզ սերունդ և վերստին հանոգվել, որ այսպիսի

հզոր սերունդ ունեցող ազգը չի պարտվելու»,- շնորհավորելով մասնակիցներին՝ իր խոսքում նշեց ԱՅ ԿԳՄՍ նախարարության լեզվի տեսչության պետ Արտակ Դուլյանը:

«Հանձնախմբի անդամների հաճելի անակնկալ էր սպասում. բոլորս համակարծիք էինք, որ ի համեմատ նախորդ մրցույթների՝ երեխաներն ավելի լավ էին պատրաստվել, ավելի շատ էին շնորհալի երեխաները: Ողջունելի է նաև, որ այս անգամ բնագրերի ընտրությունն առավել ճիշտ էր կատարվել՝ համապատասխանեցվելով ժամանակի պահանջներին:

Աշակերտները ներկաներին հուզեցին իրենց արտասանությամբ. անկախ նրանից՝ հաղթեցին, թե ոչ, նրանցից յուրաքանչյուրն այնտեղ թողեց իր սրտից մի մասնիկ, մի նշույլ իր հոգուց: Եվ զարմանալիորեն զգացին, որ այս փոքրիկներն առավել լավատես են, նրանց մեջ առավել մեծ է հավատը վաղ-վա օրվա հանդեպ: Իզուր չէ ասված՝ մեզ թվում է, թե մենք ենք դաստիարակում երեխաներին, բայց պարզվում է՝ հաճախ իրենք են մեզ դաստիարակում:

Մեր երախտագիտությունն ենք հղում մրցույթը կազմակերպող բոլոր ուսուցիչներին և



կրկին պատգամում մեր աշակերտներին. եղեք միշտ գործուն, սովորեք մեր դասականների գործերը, հիշեք՝ մարդ որքան շատ անգիր գիտի, այնքան հոգեպես հարուստ է, և ձեզ մեզն ասումը չի կարող վատ մարդ դառնալ: Մենք հավատում ենք ձեզ և մեր վաղվա օրվան, հավատում ենք, որ դուք հայի ու Հայաստանի վաղվա պահապաններն եք, դուք եք տերը մեր չարչարված հայրենիքի...

Եվ վերջում բոլորիս կողմից՝ տոնը շնորհավոր, Հայոց բանակ: Հանոգված ենք՝ դու նորից կունենաս մարտական բարձր ոգի, կլինես արդիական, կազմակերպված ու կարգապահ, առաջինը ողջ տարածաշրջանում... Հավատում ենք...»,- ասումնքի մրցույթից «Լուսարար»-ին իր տպավորությունն է փոխանցել ԱՅ ԿԳՄՍ տեսուչ, մրցույթի հանձնախմբի անդամ Գայանե Գրիգորյանը:

Սեփ. լրատվություն  
Լուսանկարները՝  
ԱՅ ԿԳՄՍ կայքից

ԿԻՐԱԿՆՈՐՅԱԿ ԳՊՐՈՋՆԵՐԻ ՈՒՍՈՒՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՆ ԴԱՍԸՆԹԱՆԵՐ

Ստեփանակերտում ավարտվեց «Լույս Արցախի մանուկներին» ծրագրի անդամիկ փուլը, որը մեկնարկել էր Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի օրհնությամբ: Այս փուլում կազմակերպվել են Արցախում տասը նորաբաց կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների վերապատրաստման դասընթացները:



Եռանկյունին, որի անկյունները պետք է ամրապնդվեն ծրագրի սպասված արդյունքով, ունի ընտանիք-հայրենիք-եկեղեցի անունը,- ասաց Վրթանես Սրբազանը՝ ամփոփելով վերապատրաստումների երկօրյա ընթացքը, որը նախօրեին ավածի շարունակությունն է կարծես,- այսպիսի ծրագրերի հիմքում մշտապես պետք է դնել հավատքը, սերը և նվիրումը, որով մատաղ սերնդին փոխանցվելուն զուգահեռ կկարգավորվի նաև ազգապահպան այն գործընթացը, որը կտանի դեպի պետականաշինություն և եկեղեցաշինություն:

Մեծ փիլիսոփաներից մեկն ասել է. «Եթե ձեր ծրագիրը նախատեսված է մեկ տարվա համար, բրինձ աճեցրեք, եթե տասը տարվա համար, ծառ տնկեք, իսկ եթե հարյուր տարվա համար, ապա կրթեք երեխաներին»: Ծրագիրն իրականացնող կողմերից մեկը ԱՅ ԿԳՄՍ նախարարությունն է:

Մեր այսօրվա փրկությունը նախ և առաջ հաճախային ապաշխարության մեջ է: Մեզանից յուրաքանչյուրը պետք է սկսի իրենից: Մեզանից յուրաքանչյուրից է կախված մեր գալիքի փրկությունը: Բոլորս եթե միասին մեկ ուղղությամբ նայենք և նայենք մի կետի, որն է՝ փրկել գալիքը և ծառայել ժողովրդին, իսկ ծառայել ժողովրդին, մշտնապես է՝ ծառայել Աստծուն, ապա հանոգված են, որ մեր փրկությունը հեռու չէ,- ասել է ԱՅ ԿԳՄՍ նախկին նախարար Լ. Ղարաբաղյանը:

Նրա հավաստմամբ՝ մենք ունենք այն ներուժը, ուսուցիչների այն մատան գունդը, որը ՀԱԵ Արցախի թեմի հետ կլծվի կրթական ու դաստիարակչական այդ շահավետ ծրագրին:

Կիրակնօրյա դպրոցը երեխաների հոգևոր դաստիարակության կարևոր օղակներից է, որը վերջին 100 տարվա ընթացքում ավելի տարածում էր գտել հայկական սփյուռքում և հայապահպանության հիմնական միջոցն էր,- ասում է դասընթացների կազմակերպիչներից Ար-

ցախի թեմի քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի տնօրեն Գոռ սարկավազ Գյուրջյանը՝ ներկայացնելով ծրագրի մտահղացման ակունքը: - Հանդիպելով դանիական-հայկական բարեգործական առաքելության գործադիր տնօրեն Նանե Խաչատրյանին՝ մենք որոշեցինք Արցախում սկիզբ դնել մի ծրագրի, որի տասնամյա փորձն օրհնաբեր արդյունք է տվել Տավուշի և Արագածոտնի թեմերում գործող կիրակնօրյա դպրոցների մատաղ շահառուներին:

Նանե Խաչատրյանը պատմում է, որ 44-օրյա չարաբաստիկ պատերազմից հետո փոքր-ինչ փոխվել է ծրագրի ուղղվածությունը: Եթե պատերազմի օրերին բարեգործական առաքելությունն արցախցիներին սատարում էր առավելապես նյութական օժանդակությամբ, ներկայումս իրականացնում են հոգեշահ առաքելություն:

Կարևոր է կյանքի կոչել և այնպես մատուցել աստվածաշնչային ճշմարտությունը, որ դա մնա ոչ թե որպես միայն գիտելիք, այլ դառնա կիրառական կյանքում և կենցաղում,- Նանե Խաչատրյանը մեզ է փոխանցում մտորումները, որոնք բոլորիս սրտից են բխում:- Դանիական իրականությունը հասել է հզոր գերտերության կարգավիճակի՝ ելնելով այն հանգամանքից, որ ըն-

դունել է Քրիստոսին իբրև առանցք և իր հասարակությունը կերտել է քրիստոնեական արժեքների հիման վրա: Սա նախադեպ է, որն ստիպում է քեզ հավատալ, որ դրան հնարավոր է հասնել նաև քո երկրում:

«Սուրբ Գիրքը» ասում է՝ «Թույլ տվեք այդ մանուկներին և մի արգելեք, որ նրանք ինձ մոտ գան, որովհետև երկնքի արքայությունն այդպիսիներինն է»,- Քրիստոսի խոսքը մեջբերում է հոգևոր կրթության և դաստիարակության ծանր բեռը հանձն առած Սուսաննա Մեթուլյանը՝ հստակեցնելով ասելիքը,- և չնայած աստվածային կրողն առավելապես երեխաներն են, որոնք լույս աշխարհ են գալիս որպես երկնքի արքայության ժառանգակիցներ, սակայն նրանց քրիստոնեական, բարոյական կերպարի հետագա ձևավորումը սերտորեն շաղկապված է ծնողների, ուսուցիչների, հոգևորականների բարոյական ընկալումների հետ:

Ծրագիրը, ինչպես ասում են կազմակերպիչները, շատ մանկավարժների է հետաքրքրել: Նրանց առաջարկությամբ հրճաբաց կավեկան կիրակնօրյա դպրոցների թիվը մայրաքաղաքում և հարակից համայնքներում:

«Մշակութային Արցախ»

ՏԵՍՉԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

ԲԱՐԻ ՕՐ, ԱՂԱՎՆՈ՛՛



ԱՅ ԿԳՄՍ նախարարության տեսչական խումբը վաղուց էր ուզում լինել Աղավնոյում, իր հիացմունքն ու զորակցությունը հայտնել հերոս համայնքապետ Անդրանիկ Չավուշյանին, համայնքի հերոսական ժողովրդին, որ դիմակայեց թշնամու նկրտումներին՝ ցույց տալով, որ ուժի դեմ առավել մեծ ուժ կիրառելով՝ կարելի է և պետք է հաղթել: Եվ ահա հունվարի վերջին մեր խումբը տեսչության պետի գլխավորությամբ և փոխնախարարի մասնակցությամբ ուղևորվեց Աղավնո: Ցավ ի սիրտ պիտի

ասենք՝ մեզ այնքան ծանոթ ճանապարհը, որ բազում անգամներ հաճույքով անցել էինք՝ հպարտանալով, որ հենց մեր սերունդն է ազատագրել հայոց պատմական հողերը, որով միշտ գնում էինք մեզ համար հարազատ դարձած, այնքան հայեցի անվանումներով գյուղերը, այցելում շրջանի բոլոր դպրոցները, այս անգամ հակառակ ազդեցություն թողեց մեզ վրա: Բավական չէ, որ մեր հարազատ հողում ամեն քայլափոխի մեզ կանգնեցնում ու անձնագիր էին պահանջում, դեռ հեռվից էլ սրտի կսկիծով պիտի

Մեզ համար մխիթարություն էր, երբ տեղ հասնելով՝ ականատես եղանք բնակիչների անկոտրուն ոգուն. նրանք ուրախությամբ դիմավորեցին մեզ՝ հպարտությամբ ցույց տալով հայրենասեր երգչուհի Շուշան Պետրոսյանի ջանքերով ու հովանավորությամբ մասամբ վերանորոգված դպրոցական շենքի հարմարությունները, նշելով, որ աշխատանքները կշարունակվեն ու ավարտին կհասցվեն հաջորդ տարում:

Մասնագետներս ծանոթացանք և զրուցեցինք ուսուցիչների հետ, կատարեցինք դասալսումներ, դրանց մանրամասն քննարկումներ, լսեցինք նրանց հուզող հարցերը, բացահայտեցինք չլուծված խնդիրները՝ փորձելով ըստ հնարավորի օգնել ու զորավիգ լինել:

Արդյունքներն ամփոփելով մանկատղիի նիստում՝ ցանկացանք անպայման տեսնել լրագրող Աբրահամ Գասպարյանի անմիջական աջակցությամբ Արիավանում բացված հացի փուռը և տուն դառնալ անմահական լավաշի հանրաճաշակած, որ իր բույրով ու տեսքով չի զիջում Գորիսի լավաշին:

...Փառք ու պատիվ բոլոր նրանց, ովքեր ծանր ժամանակներում չլքեցին ու պաշտպանեցին մեր սուրբ հողի մի բուռը... Հավերժ փառք ու խոնարհում բոլոր լույս տղաներին, որոնք այդ ճանապարհին զոհաբերեցին իրենց ունեցած ամենաթանկը՝ կյանքը, և որոնց մենք հայրենիք պարտք մնացինք...

«Բարի՛ օր, հայրենիքն



տեսնեինք՝ ինչպես է սանձարձակ թշնամին անարգել վերածնունդ մեր տարածքները՝ իր դիվային նպատակներն իրագործելու համար:

ատաններով պահող Աղավնո: Յուրաքանչյուր ճամփորդ պետք է մտնի ու բարև ասի Քեզ, որովհետև Դու ես փոխանցում չհանձնվելու խորհուրդը»,- հերթական անգամ Աղավնո մտնելուց հետո այսպիսի գրառում է արել ԱՅ ԿԳՄՍ նախկին նախարար Լուսինե Ղարախանյանը՝ նշելով, որ առաջիկա մեկ ամսվա մեջ Աղավնոյի դպրոցում կներդրվի «Երկարօրյա դպրոց» ծրագիրը:

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ  
ԱՅ ԿԳՄՍՆ ԿՊՏ ԿԵՏԱԼ

Օլիմպիադա-2022

ԱՆՅԵԼ ԵՆ ԵՆՐԱԾԱԿԻՉ ՓՈՒԼ

Ընթացքի մեջ է դպրոցականների առարկայական օլիմպիադայի 3-րդ փուլը: «Մաթեմատիկա» առարկայից 5-րդ դասարանի անցողիկ շենք հաղթահարել և 33 եզրափակիչ փուլին մասնակցելու իրավունք է ստացել 4 աշակերտ՝ Արամե Պետրոսյան (Ստեփանակերտի հ. 3 մ/դ), Տիգրան Պետրոսյան (Ստեփանակերտի հ.2 հ/դ), Գոռ Հակոբյան (Ստեփանակերտի հ.6 հ/դ), Գոռ Հարությունյան (Մարտունու շրջանի Մաճկալաշենի մ/դ):

6-րդ դասարանից անցողիկ շենք հաղթահարել են Ասկերանի շրջանի Նախիջևանի միջնակարգ դպրոցից Սանասար Սարգսյանը և Մարտունու հ.1 միջնակարգ/հոսքային դպրոցից Արամ Գևորգյանը: Ընդ որում, 18 միավոր վաստակած Սանասարը երկու միավորով զիջել է միայն Երևանի «Քվանտ» վարժարանի և «Ուսում» միջնակարգ դպրոցի երկու աշակերտի: Սանասարը ամենաբարձր միավոր (19) է ստացել նաև աշխարհագրությունից:

Մաթեմատիկայից բարձր դասարանների մասնակիցներից ոչ մեկը չի հաղթահարել անցողիկ շենք: «Ֆիզիկա» առարկայից երկու մասնակցից Տիգրան Կիսիբեկյանը (ֆիզմաթ դպրոց) 20 միավորով (անցողիկ շենք՝ 13ն.) անցել է եզրափակիչ փուլ:

«Քիմիա» առարկայից Արցախից միակ մասնակից՝ Մարտակերտի շրջանի Վաղուհասի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Սերժիկ Միքայելյանը նույնպես հաղթահարել է 3-րդ փուլի անցողիկ շենք:

«Կենսաբանություն» առարկայից եզրափակիչ փուլ են անցել Էլեն Սաղիյանը (Մարտակերտի շրջանի Չափարի մ/դ, 12-րդ դաս.) և Էլեն Դահրամանյանը (Ասկերանի շրջանի Նորագյուղի մ/դ, 9-րդ դաս.):

«Հայոց լեզու», «ՀԵՊ», «Պատմություն», «Աշխարհագրություն» առարկաների օլիմպիադայի արդյունքները հայտնի են, բայց անցողիկ միավորները դեռ չեն որոշվել:

Արժեք առանձնանշել «Պատմություն» առարկայից Շուշիի Դ. Ղազարյանի անվան միջնակարգ մասնագիտացված դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Միեր Համբարձումյանին, որը մասնակիցների մեջ հավաքել է ամենաբարձր միավորը՝ 17,75: Առաջատարների շարքում է նաև նույն դպրոցի 11-րդ դասարանից Մարինե Սարգսյանը՝ հայոց լեզվից:

Աշխարհագրությունից բարձր միավորներ են վաստակել Մարտակերտի շրջանի Վանքի դպրոցից 10-րդիներ Մարթա Չիլիմզարյանը և Վիկա Կաֆյանը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՑԵՂԱՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԴԱՏԱՊԱՐՏՎԻ

Արցախում հայկական մշակութային ժառանգության դեմ սպառնալիքների վերաբերյալ հայտարարությամբ է հանդես եկել Հայաստանում Հունաստանի առաջին դեսպան, ՍԾՏՀ նախկին գլխավոր քարտուղար Լեոնիդաս Խրիզանթոպուլոսը:

«Բաքվի կողմից վերջին պատերազմի արդյունքում Արցախից գրաված տարածքներում գտնվող հայկական տաճարներում՝ հայկական ներկայության ոչնչացման նպատակով Ադրբեջանի կողմից աշխատանքային խմբի ստեղծումը հանդիսանում է մշակութային ֆաշիզմ:


Քրիստոնեական տաճարների՝ Կովկասի ալբանացիներին պատկանելու պատրվակով այդ խումբը պետք է որոշի՝ որ տաճարներից պետք է վերացվի հայկական ներկայությունը:

Կովկասի Ալբանական եկեղեցին եղել է ինքնավար եկեղեցի: Այն ստեղծվել է կարծ ժամանակով, հինգերորդ դարում և 705թ. ենթարկվել Հայկական Առաքելական եկեղեցուն: Ալբանական այբուբենը ստեղծվել է Մեսրոպ Մաշտոցի կողմից, որը ստեղծել է հայկական այբուբենը 405 թվականին և մի առ ժամանակ հետո ստեղծել ալբանականը: Հետևաբար, անհնարին է, որ Հայկական եկեղեցին իր իսկ օգտի համար օգտագործեր ալբանական տաճարները:

Բաքվի նպատակն է իրականացնել մշակութային ցեղասպանություն, և դրա համար նա պետք է դատապարտվի»:

Լույս է տեսել

«ԱՐՑԱՒԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԻ ԹԻՐԱՆՈՒՄ»



Արցախի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախաձեռնությամբ լույս է տեսել «Արցախի մշակութային ժառանգությունը՝ հարձակումների թիրախում» համառոտ հետազոտությունը: Այս ներածական քննությունը ներկայացնում է ադրբեջանական քաղաքականությունը խորհրդային և անկախության տարիներին՝ հատկապես շեշտադրելով 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված ագրեսիայի արդյունքում ադրբեջանական վերահսկողության տակ անցած կրթամշակութային ժառանգության պահպանության վտանգները, մինչ օրս գրանցված վանդալիզմի դեպքերը և Արցախի Հանրապետության արդի մարտահրավերները՝ ուղղված մշակութային ժառանգության պահպանությանը: Աշխատանքը լույս է տեսել ֆրանսերեն լեզվով: Շուտով լույս կտեսնեն նաև հայերեն, անգլերեն և ռուսերեն տարբերակները:



ՏԱՐԱԾԱՅՐՁԱՆ

ՔԱՆԻ ԼՈՒԻ ԵՆ ՇՐԱՆՈՒԹՆԵՐԸ, ԹՈՂ ԱՆԽԱՏԵՆ ԴԻՎԱՆԱԳԵՏՆԵՐԸ

Վերջին երեսուն տարիների յուրաքանչյուր հայի, որտեղ էլ նա ապրելիս լինել, ամենաինտերսերեսորդ հարցը եղել է. «Արցախի հարցը վերջնականապես ինչպե՞ս է լուծվելու»: Հարցնում էին ծանոթին, անծանոթին, ով պատահեց, եթե նույնիսկ մահվան մահճում էին, միևնույն է, սա հետաքրքրող հարցն էր: Բավարարված էին, արդյոք, զգում, հավատո՞ւմ էին «Ամեն ինչ լավ է լինելու» պատասխանին, դժվար էր ասել, սակայն անվստահության մի շղարշ նրանց հայացքներում ակնհայտ երևում էր: Հենց նման մի հարց էլ 80-ամյա երբայրս, որ նույնպես մահվան մահճում էր նոյեմբերի 10-ին (մահացավ մի շաբաթ հետո), հազիվ լսելի ծայրով հարցրեց. «Հը, ստացվում է, որ պարտվել ենք»: Ես շտապեցի հայացքս փախցնել, որ իմ դեմքի ջղաճզված վիճակը չտեսնի: Պատերազմում չարաբաստիկ պարտությունից 15 ամիս անց իշխանավորները վերը նշած հարցին միանշանակ պատասխանում են. «ԱՆՔ Ժողովրդի անվտանգության ապահովման հարցը իշխանության համար առաջին մտահոգությունն է»: Անվտանգությունը՝ առաջնահերթություն, բայց ի՞նչ երաշխիքներ կան, երբ բանակը բզկտված է և դեռ ուշքի էլ չի եկել կատարվածից, երբ սպառազինությունը դուրս է ուշադրությունից պարզապես դրամական միջոցներ չլինելու պատճառով (հազիվ սոցիալական հարցերն են լուծվում): Միակը անվտանգության ապահովման համար, ըստ իս, ճկուն ու նուրբ, ազգամայաստ դիվանագիտությունն է՝ ուշադրության կենտրոնում ունենալով տարածաշրջանում կատարվող իրադարձությունները: Այո՛, մինչ կվերականգնվեն մեր ուժերը, կշտկվի մեր մեջքը: Պետք է կատարի ու անգիջուն պայքար մղել դիվանագիտական դաշտում, ճիգ գործադրելով մեզ վրա՝ հրավիրել միջազգային հանրության ուշադրությունը:

Ինձ թվում է, թե ժողովուրդն էլ իրավունք ունի իմանալու՝ ինչ է կատարվում իր անվտանգության ապահովման համար: Մարդու իրավունքների պաշտպանի, Ազգային ժողովի խմբակցությունների, Արտաքին գործերի նախարարության հայտարարությունները լոյս պաշտոնական բնույթ են կրում: Գուցե ինչ-որ հարցերում անհրաժեշտ են ժողովրդի աջակցությունն ու օգնությունը: Հենց այդ կառույցներին են վերապահվում հանդիպումներ ժողովրդական լայն զանգվածների հետ: Նրանցից կարծիքներ, առաջարկություններ լսելու համար, ինչու չէ, նաև հուսադրելու, թուրքական սահմաններից (որով հեղեղված է համացանցը) տուրք չտալու համար պարզաբանումներ անելու: Գո՞ւցե անհրաժեշտ է համայնքներում կազմակերպել ստորագրահավաքներ Ադրբեյջանի կազմում երբեք չմտալու կապակցությամբ, պատվիրակներ գործուղել Մոսկվա Պետդուռայի հայամետ պատգամավորներին, արտագործնախարարության աշխատողներին, շատ հնարավոր է՝

նաև երկրի նախագահին հանդիպելու պատրվակով: Չպետք է մոռանալ, որ ժամանակը մեր օգտին չի աշխատում:

Ինձ թվում է, պետք է մանրազնի ուսումնասիրել թուրք, ադրբեյջանցի պաշտոնյաների բոլոր հայտարարությունները, նրանցից կորզել այն, ինչ կարելի է օգտագործել հենց իրենց դեմ:

Վերջերս Թուրքիայի նախագահի օգնականը հայտարարեց, որ Ղարաբաղում Ադրբեյջանը հաղթանակի հասավ միայն ու միայն Թուրքիայի միջամտության շնորհիվ: Այստեղ պետք է նկատել մի նրբություն և աշխատել այն օգտագործել: Ըստ թուրք դիվանագետների՝ Ադրբեյջանը մենակ ի գորու չէր հաղթել Արցախին, ասել է թե՛ թուրք պաշտոնյան Ադրբեյջանի ռազմական հզորությունը ստորադասում է Արցախի ռազմական հզորությանը, միաժամանակ բարձրացնում թուրքական ռազմական միջամտության, աջակցության արժեքը:

Թուրքիայի արտգործնախարարի, ռազմական նախարարի, այլ քաղաքական գործիչների մասն հայտարարությունները շատ ավելի հեռուն գնացող միտում ունեն: Դա Ադրբեյջանի տնտեսապես, քաղաքականապես, առավել ևս ռազմական տեսակետից Թուրքիայի պատանդ դարձնելն է: Թուրքիան նրբորեն փորձում է իրենով անել Ադրբեյջանի նախագահին՝ վառելիքային, այսինքն՝ էներգետիկ պաշարները և ձեռք բերել հեզեմոն դեր այն Արևմուտք արտահանելու համար:

Ադրբեյջանի ժողովուրդը գիտակցո՞ւմ է այդ, թե ոչ, միևնույն է, մեր դիվանագիտությունը պետք է ուղիներ մշակի և հուշի, որ ադրբեյջանական շուկայի շեշտակի թանկացումները հենց այս երևույթների հետևանք են:

Օր օրի Թուրքիայի իշխանությունները նոր բացահայտումներ են անում Արցախյան պատերազմին իրենց մասնակցության մասին, և կգա մի օր, որ նրանք լրիվությամբ իրենց վրա կվերցնեն պատերազմի ողջ իրողությունը:

Թուրքիան այնքան էր տարված հարևան (և ոչ միայն) երկրների ներքին գործերին միջամտելու գաղափարներով, որ չնկատեց թուրքական աշխարհի հզոր պետություններից մեկում՝ Ղազախստանում կատարվող բուռն քաղաքական իրադարձությունները: Ինչպե՞ս եղավ, որ Թուրքիան չհասցրեց տեր կանգնել իր հոխորտանքների այն մասին, որ թուրքական աշխարհի ցանկացած պետության խնդիրներ Թուրքիայի խնդիրներն են: Այդ տեսակ ողջ աշխարհը Ղարաբաղյան պատերազմում, այդ տեսակ ողջ աշխարհը Սիրիայի, Լիբանանի պատերազմներում: Թուրքիան վաղուց է աչք դրել Ղազախստանի հարուստ ընդերքի վառելիքաէներգետիկ ռեսուրսներին, այնպես էլ ուրանի հարուստ պաշարներին: Բայց արի ու տես, որ խաղաղապահ ուժերի (Հայաստանի նախաձեռնությամբ) ժամ առաջ մուտքը խաթարեց պաշտոնական Անկարայի ողջ նկրտումները: Թուրքի-

ան, ինչպես գիտենք, այն երկիրն է, որ ամեն ինչ կանի իր նպատակին հասնելու համար, թեկուզ դա լինի ստոր քայլերի միջոցով:

Թուրքիան արդեն փորձ է անում օգտագործել Աֆղանստանի և Պակիստանի հատուկ ուժերը Ղազախստանում ազդեցության կորուստը փրկելու համար՝ միաժամանակ հույս դնելով իր ճկուն դիվանագիտության վրա. այնտեղ, որտեղ նրանց զինվորները արդյունքներ չեն գրանցում, դիվանագիտությունն է գործում շատ նպատակային: Թուրքական դիվանագիտությունը լավ է գիտակցում, որ Ղազախստանի ներքին գործերին միջամտելու փորձը կարող է տանել Ռուսաստանի հետ առճակատման, որ, սկսած 2014 թվականից, հաճախակի է պատահել: Դրիմի հարցում Թուրքիան մի քիչ հապաղեց, պարզապես չգիտակցեց հետևանքների լրջությունը, բայց երբ սթափվեց, արդեն ուշ էր, և ստիպված էր առիթը բաց չթողնել՝ հայտարարելով Ուկրաինայի տարածքային ամբողջականության ճանաչման մասին: Անկարան ամեն ինչ արեց կայծակնային արագությամբ Արցախին անակնկալի բերելու համար, այսինքն՝ մինչև Ռուսաստանի կողմնորոշվելը տիրանալ Ստեփանակերտին և վերջնականապես լուծել Ղարաբաղի հարցը հօգուտ Ադրբեյջանի: Բայց արի ու տես՝ ռուսներն այստեղ էլ մի քիչ առաջ անցան, և խաղաղապահ գործերը մուտք գործեցին տարածաշրջան: Այնուհանդերձ, Թուրքիան շնագայլի նման կարողացավ առյուծից մի կտոր փախցնել: Արդյունքում Ադրբեյջանում մոնիթորինգ իրականացնող 60-հոգանոց ջոկատ տեղակայվեց:

Թուրքիան Մեծ Թուրանի գաղափարն առաջ մղելով՝ չի հենվում միայն գաղափարի կամ քաղաքականության ու դիվանագիտության վրա: Թուրքական իշխանությունները լավ են գիտակցում տնտեսապես հզոր լինելու անհրաժեշտությունը: Այս տեսակետից էլ գերազանցապես լի է Ղազախստանը. Կենտրոնական Ասիայում աշխարհաքաղաքական կարևոր դիրք գրավելով հանդերձ՝ զուամարած հազարավոր կիլոմետրերով սահման Ռուսաստանի հետ, համեմատաբար թույլ բնակեցված, դեպի Հեռավոր Արևելք, դեպի Թաթարստան տանող ոլորտի ճանապարհներ:

Ադրբեյջանն էլ իր հերթին գիտակցելով, որ Ղազախստանի հարցում ավագ եղբոր հետ հայտնվել է էշելոնի վերջին վագոնում, հուսախաբված հայացքն ուղղեց դեպի Ուկրաինա: Երկու երկրներն էլ պայմանավորվեցին ճանաչել միմյանց տարածքային ամբողջականությունը: Այս հարցում Ադրբեյջանը փաստորեն քաղաքական բախման մեջ է մտնում Ռուսաստանի հետ: Ըստ երևույթին, Ադրբեյջանը փորձ է անում նաև տարածքներ վարձակալել հացահատիկային մշակաբույսերի ցանքսի համար: Սա նշանակում է, որ Ադրբեյջանը փորձում է հրաժարվել հացը ներմուծել Ռուսաստանից:

Ինչպես Ղազախստանի պահով, այնպես էլ Ուկրաինայի հետ սեպարատիվ պայմանավորվածությունների մեջ առկա հակառուսական տրամադրությունները պետք է օգտագործեն մեր դիվանագետները: Հակառակորդի ցանկացած դիվանագիտական սայթաքում պետք է հմտորեն օգտագործել՝ բողաբկված մտադրությունները վեր հանելու համար: Միաժամանակ աշխատելով այն հայտարարության վրա, որ վերջերս ինչեցրեց Ռուսաստանի արտգործնախարարությունը՝ ի հեճուկս Ալիևի հոխորտանքների. Արցախի հարցը տակավին մնում է չլուծված, և Միևնակի խմբի համաձայնագրերը պետք է ուղիներ մշակեն հարցի լուծման համար:

Պետք չէ լինել քաղաքական գործիչ կամ ռազմական վերլուծաբան՝ նկատելու այն փաստը, որ ինչպես ԱՄՆ-ը, այնպես էլ Արևմուտքի երկրները, նաև Կասպիան ամեն ինչ անում են՝ Ռուսաստանին ներքաշելու պատերազմի մեջ Ուկրաինայի դեմ: Տեսնելով, որ Ռուսաստանը հաստատում է իր հայտարարությունների մեջ, այն է՝ նպատակ չունի հարձակվել Ուկրաինայի վրա, վերջիններս սկսել են Ուկրաինային հրահրել Ռուսաստանի հետ ռազմական առճակատման: Ռուսաստանը մեր ռազմավարական դաշնակիցն է: Ինչպե՞ս պետք է գործի մեր երկիրը, ի՞նչ դիվանագիտական հնարքներով պետք է օգնել դաշնակից երկրին: Սա մեր դիվանագետների գերխնդիրը պետք է լինի:

Վերջերս հանդիպեցի Ռուսաստանի Դաշնությունից եկած մի երիտասարդի: Նա այստեղ էր նաև 2020թ. վերջին վերսկսված ռազմական գործողություններից պարզապես երկու օր անց: Նա մոտեցավ ինձ, ձեռքը դրեց ուսիս և հազիվ լսելի շշնջաց. «Լևոն դյադ, ձեր սերունդն ազատագրեց Արցախը, բայց ահա մեր սերունդը չկարողացավ պահել, պաշտպանել այն»: Նրա հետ էր պատանի որդին, ուստի առանց վարանելու բռնեցի պատանու թևը և վստահորեն հայտարարեցի. «Ոչինչ, Արսեն ջան, վիստավել պետք չէ, այ կտեսնես, սրա սերունդն էլ վերստին կազատագրի Արցախը, և բոլորս միասին կշենացնենք մեր ջքնաղ երկրամասը, ու այդ գործին պետք կլինի իմ ծերունուս և քո՛ ջլապիսը երիտասարդիդ ու ողջ հայության օգնությունը, և կհամոզվենք, որ մեր փրկությունը մեր հավաքական ուժի մեջ է: Ու քանի դեռ հրանոթները լուռ են, դիվանագետները պետք է աշխատեն օր ու գիշեր»:

Մեզ մնում է մեկ անգամ ևս սերտել համադրել Լոռեցու «Չարի վերջը», և որքան շուտ համոզվենք, որ թուրքը կացին չունի սրած, այնքան շատ կխնայենք մեր երիտասարդների կյանքը, ու նախորդս հրակեղ ոգին կհառնի մոխիրներից և կառաջնորդի դեպի հաղթանակ:

Լևոն ԱՌԱՔԵԼԵԱՆ Գ. ԵՄԻՃԱՆ

«ՀԱՅ ՄԻՏԵԸ ԴԱՐԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ». ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՑ ՄԱՆԿԹԹԵՆՎԻԼ ԲՈՒՆԶՈՒՄ



Նյու Յորքի Մանհեթենվիլի քոլեջի փիլիսոփայության բաժանմունքում նոր դասընթաց է հաստատվել «Հայ միտքը դարերու ընթացքին» խորագրով: Փիլիսոփայության բաժանմունքի ամբիոնի նախագահ է հայ մտքի արտադրությունները ընդգրկել քոլեջի ընդ-

հանուր փիլիսոփայական ծրագրի մեջ, որպեսզի հայության ծայրը հիշվի և լսելի լինի: «Պատահում է մեզ կը յիշեցնէ այս փաստը», - ասում է քոլեջի պրոֆեսոր, քրիստոնեական փիլիսոփայության ամբիոնի վարիչ Շվոն Նաշ Մարշալը: «Հանրապետություն»-ի վերջին գիրքին մեջ, ես արդարութեան իր սահմանում կարելու մէկ պահուն, ան կը վերապատմէ «Էր հայու առասպելը»: Փիլիսոփայական բաժանմունք մը չի կրնար անմիջապէս մեծարել Պղատոնը եւ չճանչնալ հայկական ծայրը»:

Դասընթացը գործում է 2021-2022 ուսումնական տարուց: Այն նոր մոտեցում ունի: Սկսվում է հետեղեռնյան հայ գրականության ներկայացումով և հետադարձ հայացքով ընթանում է դեպի հայ գրականության արմատները՝ հայ մտքի ուկրաինական վերլուծելով Դավիթ Անիաթի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Ներսես Լամբրոնացու գործերը:



Ամերիկացի պրոֆեսոր, ցեղասպանագետ Շվոն Նաշ Մարշալը հայտնի է որպես Հայոց ցեղասպանության խնդիրները գիտության ու փիլիսոփայության տեսանկյունից ուսումնասիրող եւ անաչառ կերպով մեկնաբանող հեղինակ: Հատկապես վերջին տարիներին նա մեծ ուշադրություն է դարձնում քրիստոնյաների նկատմամբ իրագործվող ոճիրների եւ, մասնավորապես, Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման խնդիրներին: 2018թ. Ստեփանակերտում կայացել է Նյու Յորքի Մանհեթենվիլի քոլեջի պրոֆեսոր Շվոն Նաշ Մարշալի «Հայրերի մեղքը» գրքի շնորհանդեսը, որը ստացվել է Արցախի պետական համալսարանի գիտխորհրդի որոշմամբ:

Շվոն Նաշ Մարշալն առաջիններից մեկն է, որն իր գրքում փորձում է ապացուցել, որ երիտթուրքերի կողմից իրականացված հայ և մյուս ժողովուրդների Ցեղասպանությունը և Թուրքիայի Հանրապետության կողմից դրա հերքումը տարբեր հանցավոր ակտեր չեն. ժխտողականությունը ցեղասպանության շարունակությունն է: Գիրքը հարուստ է պարբերական մամուլից և նորահայտ արխիվային նյութերից ներառված փաստագրական տվյալներով: «Հայրերի մեղքը» գիրքը ճշմարտության հետ առերեսման փորձ է: Հետագոտական բազմաթիվ աշխատություններ հեղինակած պրոֆեսորն այս անգամ անդրադարձել է շատ նուրբ մի թեմայի՝ հայերի ու հույների ցեղասպանությանը, ինչպես նաև Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը:

«Հայրերի մեղքը» գրքի ստեղծման ողջ ընթացքում Մարշալի համար ներշնչանքի աղբյուր էր հանրահռչակ իտալահայ գրող, «Արտույտների ազարակը» բեսթսելերի հեղինակ Անտոնիա Արուլանը: Գրականագետները խորհուրդ են տալիս վերջինիս «Արտույտների ազարակը» եւ այս աշխատությունը ընթերցել զուգահեռ, քանի որ երկու գրքերում առաջադրված գաղափարները ոչ միայն համահունչ ու ներդաշնակ են, այլև փոխլրացնում են միմյանց:

Պրոֆեսոր Շվոն Նաշ Մարշալը Ստեփանակերտում բացված «Անտոնիա Արուլան հայ-իտալական կրթահամալիր»-ի աջակիցներից է:

ԷՍՍԵ

ՊՐԱՒՏԻ ԿՈՏԸ ԽԱՉԵՆԻ ՉՈՐԱԿՈՒՄ



ենք: Ասել են՝ հա՛, երևում է, որ գտարյուն հայ էք:

Կաշաղակաբերդի հայացքի ներքո, Գանձասարը թիկունքում ունենալով՝ մարդ չի կարող այլ կերպ գոյատևել: Նա պիտի ապրի իր հայրենիքը պաշտելով, պիտի ապրի իր ազգին ծառայելով, պիտի ապրի իր հողը շենացնելով: Այս պարտավորվածության մի կրողն Իսրայելյաններն են: Իսկ թե ինչքանով Իսրայելյանները կապ ունեն Իսրայել օրու հետ, կարճ կամփոփեն՝ պատմական փաստը կապում ենք հոգեբանական փաստի հետ: Այսփոքր՝ Իսրայել օրու և Շուրա պապիկի օրի-

դանշում է միջավայրը, որում մարդ ապրում է, կացնի կորը՝ աշխատանքը, թոթն էլ սմունդն է, որից օգտվում են:

Հիշում են 2020-ի 44-օրյա պատերազմը: Տղաները՝ Ալվիկն ու Վիտային, եղբորորդի Ալիկի հետ եկել էին, որ տանեն Երևան: Հրաժարվեց՝ ես գյուղից դուրս եկողը չեմ: Ասաց՝ գինվորը սահմանն է պահում, ես էլ մեր նախնայաց գերեզմանների պահակն եմ, թողնեմ ո՞ւր գնամ: Հուզվեցին, հպարտացան. եթե սահմանն ու նախնայաց շիրիմները դեռ պահող կա, ուրեմն երկիրը կանգուն է:



Ալիկը դրանից առաջ մի օրով Երևան էր մեկնել. ասում է՝ աշխարհում քանի հիվանդություն կա, ջանս էր ընկել: Թողնեցի, ետ եկա, ու զարմանալի բան՝ ճանապարհին բոլոր հիվանդությունները մարմնիցս ճողորկեցին, չգիտես ուր կորան: Փեսան էլ՝ Արթուրը, ոգևորված Լամիրա կնոջն ասաց՝ վերջ, քաղաքի տունը թողնում ենք երեխեքին, վերադառնում գյուղ: Հավ կպահենք, բանջարանոց կմշակենք, որպեսզի երկար ապրենք: Մենք որ երկար ապրենք, գյուղի ումբըն էլ կերկարի: Նրա հայրական տանը՝ Քոլատակում դեռ երջանկահիշատակ ծնողների հոտը մնում է: Արթուրն այս առնչությամբ ասում է. «Պրախտում չեմ եղել, բայց այդ հոտը հաստատ դրախտի հոտն է: Որ գալիս եմ գյուղ, ասես թոքերս բացվում են, շնչառությունս լավանում է...»:

Շուրա պապիկը կոմունիստ է: 50 տարվա պատմության ուսուցիչը, որից 45 տարին՝ դպրոցի տնօրեն, լավ գիտի իր ժողովրդի պատմությունն ու գաղափարական ընտրությունը համոզմունքով էր կատարել: Խաբել չգիտեր, տանել չէր կարող ծուլերին, այնքան ազնիվ էր, որ նրան վատահեցին գյուղի կոլտոզի ղեկավարությունը: Հինգ տարի նախագահ եղավ, բայց ղեկավարի մեծ չպահեց իրեն: Մի օր շրջանի ղեկավարությունը գյուղ էր եկել նրա հետ համոզիչելու: Ման եկան, չկարողացան գտնել: Պարզվեց, որ գնացել է նախիրը պահելու: Երբ երեկոյան եկավ, կշտամբեցին՝ դու նախարապա՞հ ես, թե նախագահ: Ասաց՝ Սաշան խոռվել էր, չգնաց տավարի հետևից: Դե, նախիրը հո՞՞ անտեր չէի թողնի, ստիպված ինքս գնացի:

Հարցրինք՝ զո մեծ գերդաստանին, համապարտությանը, Արցախի բազմաչարքար ժողովրդին տարիքի բարձունքի ի՞նչ մաղթանք ունես: Թաքուն ժպտաց, երկար նայեց Կաշաղակաբերդի ուղղությամբ ու թեքվելով դեպի կողքին հնազանդ նստած կինը՝ Լեւոնրան, մրմնջաց.

- Թող աշխարհը խաղաղ լինի...  
Խաչենի ծորակում հիմա խաղաղ է. Շուրա պապիկի օրհնանքի ուժն էլ թերևս այս խաղաղության մեջ առկա է:

Սվետլանա ԽԱՉԱՏՐՅԱՆ

Խաչենի ծորակի ամենահին գյուղը տեղացիների պնդմամբ Թբիլոն է: Տեղացիներն առարկություն չընդունող տոնով ասում են՝ Թբիլոն ստեղծվել է 7-րդ դարում, բայց քարը քարին Խաչենի ծորակում դրվել է 5-րդ դարում: Կաշաղակաբերդը բարձրացողներն անպայման տեսել են 5-րդ դարում կառուցված հին պարիսպը. այն Խաչենի ծորակի ամենահին շինությունն է: Գյուղը նախապես եղել է Գամնաքար գյուղից 2 կիլոմետր հեռու՝ Հակոբավանքի մոտերքում. այնտեղ գտնվող գերեզմանները մինչև հիմա պահպանվում են: Թբիլոնից հետո, երկու դար անց ևս երկու գյուղ է կառուցվել՝ Քոլատակն ու Վանքը: Ասում են՝ Գանձասարն ստեղծվել է Հասան Ջալալյանների օրոք՝ 12-13-րդ դարերում: Նաև ասում են՝ Գանձասարը 9-րդ դարում կառուցված եկեղեցու հիմքի վրա է ստեղծվել, Հասան Ջալալյանների պապերն են այդ հիմքը գցել: Վերևի հարթավայրը նրանց ամառանոցն է եղել, հետագայում նրանց ծոռները եկել, կառուցել են Գանձասարը:




ամօրեն թուրքից և պարսիկից իրենց ազատեն: Այդ բանազանց Իսրայել Օրին է եղել: Ասում են, որ թբիլոնցի Իսրայելյանների տոհմը ուղղակի կապ ունի Օրու հետ: Չհավատացողներին պարտադիր կարգով կվկայաբերեն Շուրա պապիկի թոռնուհուն: Այսպես ու այսպես. Երևանում ապրող թոռնուհի Սնեժանան իր երկու զավակներին պարապմունքի էր տարել մարզական մի ակումբ, որտեղ նրան հարցրել են՝ կներեք, դուք հա՞յ էք: Թոռնուհի Սնեժանան մտածել է՝ եթե ասի, որ արցախցի է, ջոկողության մեջ իրեն կմեղադրեն: Համեստորեն ներկայացել է՝ Հասան-Ջալալյանների ու Իսրայելյանների զարմից

Թբիլոնի ամենատարեց բնակիչը Ալեքսանդր-Շուրա Իսրայելյանն է՝ ուսուցիչը, դպրոցի տնօրենը, կոլտոզի նախագահը: Հունվարի 1-ին զավակները, թոռները, ծոռները, զարմիկները եկել էին նրա 90-ամյակը նշելու: Միայն հարազատները չէ՝ համագյուղացիները, գերդաստանի ծանոթ-բարեկամները նույնպես միաբերան վկայում են՝ Շուրա պապիկի կերպարի մեջ խտացված են գյուղի անցյալը, ներկան ու ապագան:

Այս դրախտային ծորակից ավելի քան 300 տարի առաջ հանրաճանաչ մի ազգային գործիչ մեկնել էր Եվրոպա և Ռուսաստան ու եվրառուս թագավորներին հորդորել՝ գան

ԱՂՐԵՋԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԵՆ ԲՆԱԶՆՋԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՕԿՈՒՊԱՅՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

2022 թվականի փետրվարի 3-ին Աղրեջանական Report news agency լրատվական կայքը հրապարակեց մի հոդված, որտեղ ներկայացված էր Աղրեջանի մշակույթի նախարար Անար Քերիմովի հայտարարությունը: Մեջբերելով նախարարի խոսքերը՝ կայքը նշում է, որ Աղրեջանը պատրաստվում է ստեղծել հատուկ աշխատանքային խումբ՝ բաղկացած աղվանական պատմության, մշակույթի և ճարտարապետության մասնագետներից, ինչպես նաև պետական կառույցների ներկայացուցիչներից, ովքեր «ուսումնասիրությունից» հետո պետք է հեռացնեն Արցախում «աղվանական կրոնական/քրիստոնեական» կառույցների վրա «հայերի կողմից գրված, ավելացրած



կեղծ գրությունները, արձանագրություններն ու հետքերը»:  
Անար Քերիմովը հավելել է նաև, որ աշխատանքային հատուկ խումբն արդեն ստուգել է աղվանական կրոնական կառույցների որոշ գրվածքներ, բայց վերջնական ստուգումը պետք է կատարվի ականագերծման աշխատանքներից հետո, որոնք անվտանգ միջավայրում և արդեն միջազգային փորձագետների ակտիվ ներգրավվածությամբ պետք է բացահայտեն «հայերի կեղծիքները», փաստաթղթավորեն դրանք և ներկայացնեն միջազգային հանրությանը: Արդյո՞ք դա մշանակում է, որ պիտի ջնջվեն Արցախի հուշարձանների հազարավոր հայերեն արձանագրությունները, ինչպես դա ցուցել է

Ալիկը Ծակունդում: Արձանագրություններ, որոնք այդ ժառանգության պատկանելության ամենակարևոր և առաջնային վկայություններն են:

Մեր արձագանքը

Աղրեջանի նախարարի այս հայտարարությունից պարզ է դառնում, որ Աղրեջանը ծրագրում է ոչնչացնել Արցախում հայկական ժառանգության հետքերը՝ «աղվանական» մշակույթի վերականգնման քողի տակ: Այս մասին ավելի մանրամասն կարող եք կարդալ կայքի մեկ այլ՝ «Ռևոլյուցիոն քարոզչությունը որպես Աղրեջանական քաղաքականության դրսևորում» հոդվածում: 8



ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՑԱԽԻ ԳԵՂԱՐԿԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԿԱՐՂԱՆ ՀԱԿՈՒՅԱՆԻ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ



Դեռևս դպրոցական տարիներին Կարդան Հակոբյանը Աստուծո օրհնանքով բարձրաձայնել է: «Եվ ոչ թե իր հետ իմ ճանապարհին է տանում ինձ հեռուն, Այլ ես եմ ինձ հետ ճանապարհի տանում»:

Աստվածային շնորհք ունեցող պատանին միայն կարող էր այսպես Աստվածահաճո իմաստությամբ ազդարարել իր մուտքը գրական աշխարհ, գրական աշխարհից էլ՝ պոեզիայի ծարավ սրտեր:

Ասենք, որ Հակոբյանը պատանեկան թոթովանքների ուղի չի անցել: Նրա մուտքը սրտերի միջով եղավ դեպի քնարերգություն ու քնարերգությունից՝ սրտեր: Նշենք նաև, որ Արցախի Կարդան որդին ի ծնե հաղորդակցվել է տիեզերական արարող ուժերի հետ, ստացել նրանց օրհնանքը, ճամփա ընկել ծննդավայր Արցախից դեպի Հայոց աշխարհ՝ ազդարարելով Կահագն Դիցի ժառանգորդը լինելու իր պատրաստակամությունը: Նման դեպքում են արձանագրում գրողի Հայտնություն լինելը:

Այո, Կարդան Հակոբյանի մուտքը պոեզիա աստղաշող հայտնություն է: Նա եկավ հաստատելու, որ Աստված իր երկնային աստղածիր բարձունքներից նայում է երկրածիր բարձունքներին, արարելու ոսկեփղով օծում այն Անհատներին, ովքեր աշխարհ են գալիս՝ իրենց հոգու երանգներով ծիածանելու աշխարհը:

Սակայն միաժամանակ Աստված պատվիրում է իր արարող նվիրյալներին՝ երբեք չմոռանալ այն հողն ու ջուրը, որոնց ծնունդն է ինքը, քանզի անհատի արարող կարողության աղբյուրը հարազատ ծննդավայրն է, այն օրորոցը, որի մեջ լսել է մայրական հավերժաձուլի օրորը:

Նշենք, որ Կարդան-բանաստեղծի մայրական օրորոցը Արցախ աշխարհն է: Այդ է վկայում Կարդանված պոեզիայի այն աշխարհը, որ հայտնի է Արցախ անունով:

Վ. Հակոբյանի երգերի առաջին գիրքը «Մեղեդիներ» խորագրով ազդարարեց, որ նրա քնարական հերոսի ոգևորությունը թևում է հոգու խորքից, գնում փարվում է Աստվածամկեր բնություն ունեցող Արցախ աշխարհին, որտեղ ոգևորության ու բնության եզրերը միաձուլվում են և այնպես են փարվում իրարու, որ դժվարանում են կռահել՝ բանաստեղծն է ծնվում բնությունից, թե՞ բնությունն է ակունքվում բանաստեղծից, կյանքն է թելադրում բնության իմաստը, թե՞ հակառակը: Լսենք բանաստեղծին.

*Կորընթաց ժայռին՝ մի անձրևտոված  
Ու մեծավոր ծառ.  
Տերևների մեջ արտացոլանքը  
վառվող աստղերի:  
Եվ ծառ չէ ծառը,  
Մի կանաչ-կանաչ լուսամկոփ է նա՝  
Բնության ծեղրով  
Կախված խոր ծորի մթության վրա:  
Բնությունից դեպի մարդկային արարքներ  
կոնկրետ գնահատականը բանաստեղծի մոտ*

տեղի է ունենում դարձյալ բնության միջոցով, և նրա աշխարհի սահմաններն ընդգծվում են բնությունից մարդ, մարդուց՝ բնություն եզրերով, և որ շատ կարևոր է, հատկանշվում են նրա ոճը, հղացումների դրսևորման ձևերը, նյութի և մտածողության ներդաշնակությունը: Այդ առումով հաջող օրինակ է «Քայլերս» բանաստեղծությունը: Երգիչը որպես քնարական հերոս, իր քայլերը համեմատում է կանաչ ծեղրերի, կանաչ երգերի, սուրբ ճշմարտության վերընծյուղումների հետ: Դրանով, սակայն, չի բավարարվում պոետը: Գունային համակարգից ծնվում է բանաստեղծական գյուտ-ընդհանրացումը, որով հաստատվում է առողջ քայլերից սկիզբ առնող հավիտենության գաղափարը.

*Եվ դրա համար քայլում եմ ես միշտ:  
Քայց կկարողանամ՝  
Մի փոքրիկ քայլ դառնալ աշխարհի  
Հավիտենության ճանապարհին...*

1989թ. Երևանում «Լույս» հրատարակչությունը տպագրեց Վ. Հակոբյանի «Արցախա ծուխ» ժողովածուն: «Արցախա ծուխ»-ը արարելու-հարատելու, սիրելու-սիրվելու, մաքառելու թևավոր ծուխ է: Այն երևում է հեռվից: Աչքերից դառն արցունքներ բերող ծուխ չէ դա, այլ մեռնի բույր է, պապ ու տատի շունչ, հոր ու մոր շոյանք, մանկանց ժպիտ, հայրենի հողի գարնանային ցող, ապագային հառած աչքերի շող, ժողովրդական սիրո փայլատակում: «Արցախա ծուխ» գրքում Հակոբյանի քնարական հերոսը ջերմությամբ, արյան եռքով Արցախի հետ է: Նա իր երակներին մեջ գզում է հողի ծլարծակումը, լեռների աստղագնա ընթացքը, ժամանակների իմաստը.

*Փոխվել է ժամը, դասը չի փոխվել,  
զանգում ծուլվել է Սարդարապատը...*  
(«Որդան կարմիր»)

Բանաստեղծը եզրակացնում է, որ մղձավանջը պետք է մարի տան լույսից, ամեն մի անհատակ դառնա «գոյություն վճիռ», «հավատը՝ սուրբ տուն», առավոտը՝ «հառնումի բաց դաս», «և դարձն արմատանց, մարտիրոսություն» («Մղձավանջ»): «Ձգված աղեղներ» երգում բանաստեղծը դառն ու հուսադրող զգացումների մի թարմ պատկեր է հյուսում, ուր արմատը խրվում է ամպի մեջ, ծորում խրխիմը կորցնում է ձիուն, «օրվա մտքի մեջ խայտում է սուտը»: Զնարական հերոսի աչքին լեռնազագաթները աստղերի գոհասեղան են թվում, «խիղճը փնտրում է ու չի գտնում տեր», այդ պատճառով էլ «օրերն անցնող՝ սլացող նետ են»: Սակայն չի հուսալքվում քնարական հերոսը.

*Ձանգը արթնացավ արյան խորքերում,  
զոհերը ելնում, միանում են մեզ,  
անթիվ ծեղրերով գրկվել է Քիրսը,  
և լեռան փեշից մեռն է թափվում,  
Ինչ էլ որ լինի, մենք լինելու ենք:*

Վ. Հակոբյանը՝ որպես կարոտի ու սիրո երգիչ, տեսավ 20-րդ դարի մղձավանջը արցախցիների ազատաբաղձ ոգու դեմ, դառնությունը ու ցասումով խարազանեց ուժերի ցինիզմն ու դաժանությունը: «1988 թիվ, փետրվար» բանաստեղծության մեջ հեղինակն արևը պատկերում է իբրև «պատուհանից դուրս նետված» արյունաբաժ մանուկ, իսկ «երկինքը՝ սարդի մի ցանց»: Բացվում է կապանքի սուտը, ավարտվում է ամեն մի դիմակահանդես, և պարզվում է, որ ընդհանուր բացականչությունների տակ ոչինչ չի փոխվել. «գայլը գայլն է նույն բնույթով պատիր՝ գառան մորթու մեջ, թե որջում անտես»: Սկստի ունենալով նոր զգեստներ հագած դաժան ուժերի վայրենությունը՝ բանաստեղծը գրում է. Ատամը արյան համ առավ կրկին, Նորից երևաց մուտքը գայլի...

Բանաստեղծը միաժամանակ հնչեցնում է հարատելու կոչը՝ ընդգծելով, որ հողը պետք է բերդ դարձնել, դուրը չբացել, սրբել մամու-

ռը, չմոռանալ որ՝  
*Մենք, որդիք Հայկի, արդար ու վսեմ,  
Ցավ ու դառնություն այդ ե՞րբ չենք տեսել,  
Քայց ոչ մի անգամ, Աստված է վկա,  
Արցախին հաղթող չի եղել, չկա...*

1989թ. Վ. Հակոբյանն ընթերցողի սեղանին դրեց նաև «Ամարասի զանգերը» խորագրով գիրքը: Ծանոթանալով գրքի «Այս խաչքարը ես եմ» շարքին՝ զգում ես Արցախի համակող շունչը, լսում արդարության կանչը: Հակոբյանի երգերում գոյատևելու ճշմարտությունը բանաստեղծական ենթագիտակցությունից վերածվում է հույսի և հավատի: Այդ հույսն ու հավատը թխում են բանաստեղծի լեռնաշխարհից, ուր «քարերն էլ հասցե են ու գիր», ուր «ճամփաներ են ծորում արյունից, և քայլը սիրո նշան է հողին»: Ոտքերի տակ ունենալով հողը սրբազան՝ արցախցին ճամփա պահելով, տեսնում է, որ «ընծյուղվում է օրը տաք ափից» և «խորքերով է արմատը երգում»:

«Այս խաչքարը ես եմ» բանաստեղծությունը ծնված է ցավից: Այդ ցավը բանաստեղծի համոզմամբ «մեր ժողովրդի կրկնվող պատմության դասն է»: Այդ ցավ-դասը, որպես հոգու ճրագ, մերվել է բանաստեղծի երգերին ու դարձել մաքառման խոռվը:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման հերոսները հառնեցին Վ.Հակոբյանի Նոր երգերում: Նա առաջինը ձեռք մեկնեց Սուսի կերպարին: Ամեն մի հայի համար թանկ ու հարազատ այդ անունը առաջին հերթին խորհրդանշում է հայ ֆիդայուհուն: Ահա ինչու բանաստեղծը նրան ներկայացրեց որպես սիրո ու հայրենիքի ամբողջություն, այսինքն՝ պայքար:

Ըստ բանաստեղծի՝ Աղբյուր Սերոբին ժողովրդի հանդեպ եղած նվիրումից բացի ֆիդայական հրաշքների է տարել նաև Սուսի մեծ սերը: Պատահական չէ, որ Սուսն վերածնվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական նորօրյա պայքարում: Շարքը ծնվեց ժամանակին: Որոշ ժամանակ անց բանաստեղծը հրատարակեց երգերի ժողովածու «Սուս» խորագրով, որի միջով ընդգծված անցնում է պայքարի գաղափարը: Գիրքը բացվում է «Բանաստեղծության համար չեմ ասում...» երգով: Այն հայրենասիրության և ազատասիրության դարավոր զգացումից ծնված խոսք է՝ ասված Արցախյան գոյամարտի ամենաթեժ պահին.

*Մեկ-մեկ թվում է՝ Դավիթն եմ, վրաս  
Քառսուն ջաղացքար.  
Ձենով Օհանի ձենն է ինձ հասնում:  
Մեկ-մեկ թվում է, թե Ավարայրի  
հողն է ոտքիս տակ,  
Կարդանանց կրվի ձենն է ինձ հասնում:  
Մեկ-մեկ թվում է, թե Ճգնավոր եմ՝  
Փակված մի վանքում .  
Խալխի դուրս կանչող ձենն է ինձ հասնում:  
Մեկ-մեկ թվում է՝ Սարդարապատում  
Ընկած զինվոր եմ.  
Հաղթանակի սուրբ ձենն է ինձ հասնում:  
Մեկ-մեկ թվում է՝ Արցախի սրտից  
Կաթած արյուն եմ.  
Չմեռնող հույսի ձենն է ինձ հասնում...  
Արցախի սրտից հոսող արյան առաջն առնելու, չմեռնող հույսի ձայնը անկաշկանդ ու հնչելը դարձնելու միակ ճանապարհը բանաստեղծը համարում է պայքարը ու իրեն նետում մաքառումների հորձանուտը.  
Ժամանակը թռչում է հավքի պես, -  
Երկինքը թև է գտնում իր համար,  
Թախիծը վարդ է գտնում իր համար,  
Հողը երագ է գտնում իր համար,  
Եվ ես անունն եմ դառնում մաքառման:  
(«Մաքառումներ»)*

Արցախն իր գույներով Վ. Հակոբյանի գեղարվեստական փիլիսոփայության ակունքն է: Պատահական չէ 1989թ. «Լույս» հրատարակչության կողմից տպագրված ընտրամու-



վերնագիրը. «ԱՐՑԱԽԱ ԾՈՒԽ»: Եիշտ ու տեղին է գտել բանաստեղծն իր հոգու ծաղկեփնջի անունը: Հայրենի երկրից մանկության հուշեր ժողովելով՝ հայրական օջախից առնելով անմարում կրակներ, բնության երանգներով լցնելով հոգու շերտերը, ժողովրդի դարավոր ցավն ու չխամրող հավատն առած սրտի ծայքերում, աշխարհի աչքերին համարձակ նայելով, արդարության խիղճը շոշափելով՝ Վ. Հակոբյանը ինքնամոռաց երգի աշխարհն էր մտել ու պիտի վերջապես ասեր իր խոսքը և ասաց:

«Արցախա ծուխ»-ը արարելու-հարատելու, սիրելու-սիրվելու, մաքառելու-թևավորվելու ծուխ է: Այն երևում է հեռվից: Աչքերից դառն արցունքներ բերող ծուխ չէ դա, այլ մեռնի բույր է, պապ ու տատի շունչ, հոր ու մոր շոյանք, մանկանց ժպիտ, հայրենի հողի գարնանային ցող, ապագային հառած աչքերի շող, ժողովրդական սիրո փայլատակում: Ինչպես անվանի բանաստեղծ Ռ. Դավրյանն է նկատել, «Առանց պաթետիկ խոստովանությունների, վերամբարձ հայտարարությունների, քայլում է բանաստեղծը իր հարազատների ու հարազատ բնաշխարհի միջով ու գրեթե մրմունջով հայտնաբերում է սերերի անեզր մի աշխարհ, խոտ ու ծաղկի հետ գրույցից մինչև Արցախ աշխարհի ճակատագրի բարդ ու աննկատելի հանգույցները վերածնելը, չափազանց ժամանակակից հնչողությամբ...»

...Կարդան Հակոբյանը մեզ է փոխանցում բանաստեղծական կենդանի, ապրող մի աշխարհ, որի գոյությունն ամփոփելի է» (Ռ. Դավրյան, «Կարդան Հակոբյանի «Ծաղիկ բիր-լիական»-ը, «Արցախա ծուխ» ժողովածու, 1989, էջ 277-278):

«Արցախա ծուխ» ժողովածուն բաղկացած է բանաստեղծությունների ութ շարքից և քնարական պոեմներից: Դրանց մի մասի գնահատականները տրված են առանձին-առանձին գրքերի ներկա վերլուծություններում, ուստի դրանց չենք վերադառնա: Ուշադրություն կդարձնենք ընտրամու հավաքական որակին, երգերի ընդհանուր փնջի մեջ բանաստեղծի ստեղծագործական խառնվածքին, գեղագիտական-փիլիսոփայական ընդհանրացումներին: Իհարկե, միաժամանակ կգնահատենք այն ստեղծագործությունները, որոնք նոր են և տեղ չեն գտել նախորդ ժողովածուներում: Գիրքն ամբողջության մեջ առաջին հերթին հնարավորություն է ընձեռում տեսնելու, շոշափելու բանաստեղծի աշխարհընկալման նախնական և նոր միտումները: «Արցախա ծուխ» գրքում կարևորվում է Արցախ և Հակոբյան-բանաստեղծ փոխհարաբերությունը, այն ներհյուսման աստղծը, որ նկատվում է նրա բանաստեղծություններում: Արցախի հանդեպ եղած երախտագետ որդու սերը պարզապես բուրվառվում է որպես բանաստեղծական ներշնչանք: Դրանով էլ պայմանավորվում են բանաստեղծի ինքնատիպության չափն ու կշիռը, գույնն ու փայլը:

ԳՐԱԿԱՆԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՑԱՆԻ ԳԵՂԱՐԿԵՍԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԿԱՐՂԱՆ ՇԱԿՈՒՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

7 Շողովածուի տարբեր մոտիվներ ընդգրկող շարքերում Վ. Հակոբյանը սրտի դողով, հոգու ջերմությամբ, արյան եռքով Արցախի հետ է: Սիրո մեջ էլ երևում է նրա արցախցի լինելը: Իսկ այդ զգացումն արմատներ ունի՝ ծոված մեր պատմության շերտերի մեջ: Այդ արմատները շնչառություն ունեն, սերունդների համար զարկերակ են ու պատվով ապրելու կոչ: *Տիարք, քարերին ասում եմ՝ ելե՛ք, և բլուրն ինքը իրեն բացում է, և երկինքն իրեն հանում է հողից, և հողում թաղված խաչը ելնում է, և ոտք է բռնում ճամփան Արցախա:*

(«Վարդան բլուր») Կյանքը Վ. Հակոբյանի պատկերացմամբ անընդհատ ընթացք է, և այդ կյանքն ասես պորտալարով իր շնչառությունն առնում է Հայոց աշխարհի հին ու նոր գոյամարտերից, պատիվ դարձած հողից, դրոշի ու սիրո փոխված անուններից: Անսովոր պատկերներ է ստեղծում նա, իր երակների մեջ զգում հողի ծլարձակումը, լեռների սանձակոտոր լինելը, օրվա բույրներում բարի բաբախումը, որոնք թրթռներ են դառնում քնարական հերոսի շուրթերին: *Փոխվել է ժամը, դասը չի փոխվել, Ձանգում ծուլվել է Սարդարապատը, Աչքերս հողում ցանված կարոտ են, Մետրոպոլիսի ձեռքի մեջ՝ Սուրբ Գիր, և Ամարասն է իմ դեմից գալիս:*

(«Որդան կարմիր») Բանաստեղծը եզրակացնում է, որ մոլորական ջր պետք է մարի տան լույսից, ամեն մի նահատակ դառնա «գոյության վճիռ», հավատը՝ «սուրբ տուն», առավոտը՝ «հառնումի բաց դաս», «և դարձն արմատանց՝ մարտիրոսություն» («Մոլորական»):

Վ. Հակոբյանի պոեզիայում ամեն ինչ շարժման մեջ է: Մեր հին և նոր գրերի ճակատագիրը նույնպես ընթացք է, մինչդեռ ավաղ, ծանր: Եվ այդ ընթացքը բանաստեղծին թելադրում է զգոնացնող տազնապ, որի միտումն ապրելու ծարավն է: «Ձգված աղեղներ» երգում բանաստեղծը դառն ու հուսադրող զգացումների մի թարմ պատկեր է հյուսում, ուր անտառը երգվում է ամպի մեջ, ծորում խրիսեզը կորցնում է ձիուն: Քնարական հերոսի աչքին լեռնագագաթները աստղերի գոհասեղան են թվում, «խիղճը փնտրում է ու չի գտնում տեր», այդ պատճառով էլ «օրերն անցնող՝ սլացող նետ են»: Սակայն չի հուսալքվում քնարական հերոսը, նա իր աշխարհին նայում է հույսով: *Ձանգը արթնացավ արյան խորքերում, գոհերը ելնում, միանում են մեզ, անթիվ ձեռքերով գրկվել է Քիրսը, և լեռան փեշից մեռն է թափվում. ինչ էլ որ լինի՝ մենք լինելու ենք:*

Արցախյան շարժումը Հակոբյանի բանաստեղծական խառնարանում նոր երանգներ է առաջացրել: Կարոտի և սիրո երգիչը, տեսնելով 20-րդ դարի մոլորականը մեր ազատաբաղձ ոգու դեմ, ցատկոտ խարազանում է չար ուժերի ցինիզմն ու դաժանությունը: «1988 թիվ, փետրվար» բանաստեղծության մեջ հեղինակն արևը պատկերում է իբրև «պատուհանից դուրս նետված» արյունաքան մանուկ, իսկ երկինքը՝ «սարդի մի ցանց»: Բացվում է կապանքի տուտը, ավարտվում է ամեն մի դիմակահանդես, և պարզվում է, որ ընդհանուր բացակացությունների տակ ոչինչ չի փոխվել, «գայլը գայլն է նույն՝ բնութով պատիր, գառան մորթու մեջ, թե որջում անտես»: Նկատի ունենալով նոր զգեստներ հագած դաժան ուժերի վայրենությունը՝ բանաստեղծը գրում է. *Ատամը արյան համ առավ կրկին, Նորից երևաց մուրքը գայլի...*

Բանաստեղծը միաժամանակ հնչեցնում է հարատևելու կոչը՝ ընդգծելով, որ հողը պետք է բերդ դարձնել, դուռը չբացել: սրբել մամուռը, չմոռանալ, որ՝ *Մենք՝ որդիք Հայկի, արդար ու վսեմ,*

*ցավ ու դառնություն այդ ե՞րբ չենք տեսել, բայց ոչ մի անգամ, Աստված է վկա, Արցախին հաղթող չի եղել, չկա...*

Ըստ էության, «Խորանի առաջ» շարքը «Ձգված մեղեդիներ»-ի շարունակությունն է: Այստեղ ևս Արցախ աշխարհն է՝ իր անկրկնելի բնակարան ու ներկայով, ակնկալություններով ու տվյալներով, մաքառումներով և հույսի կրակներով: Այստեղ ևս բանաստեղծի ակամջը Գանձասարի ու Ամարասի զանգերին է, մեր քաջ պապերի ծայրին: Հակոբյանի հայրենասիրական երգերի հյուսվածքը բազմաշերտ է: Նրանցում նա իր միջոցով գնահատում է Հայրենիքը, իսկ Հայրենիքի միջոցով՝ իրեն: Այդ դաշնությունը խեղճացնող ուժ ունի, քանի որ Արցախը միայն ապրելու վայր չէ, այլ և մեր ազգային գոյության խորհրդանշանը: Դրա շնորհիվ էլ բանաստեղծի գրույցը Արցախ-մոր հետ անմիջական է, փիլիսոփայորեն ներհուն, զգացմունքներով՝ ջերմացնող: *Բացում են սրտիս ծայքերը բուրբ, Ո՞վ է, տալիս է անունս, գնամ, օրն ու գարունը պահն են անհունի, թե ես քո ցավին տեր չեմ կանգնելու, գնամ Թաթառը ընկնեմ՝ ինձ տանի, Սրտի պես բաց են ծայքերը բուրբ:*

Հղանալով հայրենի օջախի հետ գրուցելու տարբեր վիճակներ՝ Հակոբյանը բանաստեղծական տաղաչափական բազմազան խմորումներով ստեղծում է Հայրենիքի կերպարը: Պատկերային նատյուրմորտների մի-մի հիանալի օրինակներ են նրա շատ բանաստեղծություններ: Շարժման ընթացքի մեջ իրենց վեհությունն են ներկայացնում Արցախի հին ու նոր կոթողները, որոնք բանաստեղծի համար և՛ շոշափելի են, և՛ հոգևոր մախչեր՝ հայրենիքի հայացքով: Բերենք «Գանձասարում» բանաստեղծության ավարտը. *Արթնացել է Արեգակը ծեղր-ծեղին, Տողը կաթեց խաչքարին ու արցունք դարձավ,*

*սահեց ամեն տառ ու նախշով, հարցնումը դարձավ, և Արևը երկնքի մեջ մոմեր վառեց:*

Խորն է բանաստեղծի ցավը: Դեշտ չէ հաշտվել այն մտքի հետ, որ հարազատ Արցախը կարող է կորցնել իր ինքնությունն ու լեզուն: Այդ ցավից է ծնված Վ. Հակոբյանի Արցախապատումը: Դրանով են բացատրվում նրա ընդգծումները՝ քիսած հայրենի օջախի անկրկնելի զեղեցկությունից ու քնարական հերոսի ներքին հպարտությունից: *Չի հոգնում ճամփան ուխտավորների, մատուռ կա ամեն մի լեռան վրա, ամեն մի գագաթ գմբեթ է վանքի, ահա թե ինչու խաբեությունը խորթ է լեռներից, և ամեն մի խոսք բառ է սուրբ երգի:*

Երգ է ոչ միայն բառը: Վ. Հակոբյանը Արցախի բոլոր մասունքներում և արցախցու երթ ու եռքի մեջ էլ երգ է տեսնում: Դա սովորական երգ չէ, այլ բերկրանքի ու թախծի, նվիրումի ու արևելու տենչ: Այդ տեսանկյունից էլ բանաստեղծն իր մի շարք հյուսվածքների շաղախը դարձյալ համարում է Հայրենիքի հանդեպ եղած վերաբերմունքը և սերը: Վերցնենք «Արցախուհին» բանաստեղծությունը: Գիշտ է, նրանում պատկերված է արցախուհու հրաշք պարը, սակայն ոտանավորի ենթատեքստային հոսքը դարձյալ տանում է դեպի Արցախ: Եվ Արցախուհին դառնում է Արցախի խորհրդանշանը: Այսպիսով, մարդն ու իր օջախը ներկայացվում են միաձույլ ճակատագրով: *Արցախուհին... Վանքի գմբեթ-Աստվածամերձ*

*և մատուռ է անմատչելի, լուսադավան... Արցախաբույր իր այդ պարով ամենամեծ Լեռը ոտքի տակ կրերի նա խոնարհման, և՛ հզոր է, և՛ թույլ է նա, և՛ սուրբ սակայն:*

Հորիզոններ են ընդգրկում Վ. Հակոբյանի հայրենասիրական երգերի շառավիղները: Հայրենիք ասելով նա հասկանում է այն ամենը, ինչով տարածքը և ժողովուրդը միասնանում են ու ստանում իմաստ, ծեղք բերում դիմագիծ, ծիսաճանվում որպես ազգային ոգի: Առանց հայրենի երկրի իմաստազրկվում է հայրենի օջախն անգամ: Նրանով է գեղեցկանում և արարելու մղում յուրաքանչյուր գործ ու խոսք: Այդ գաղափարն է նշված «Հայոց լեզու» երգում, որ բանաստեղծը նվիրել է ուսուցիչ հորը՝ Սարգիս Հակոբյանին: Մետրոպատառ մայրենին՝ «Հայերենը, հրաշքներ է գործում: Հայերենն է սերունդներին տարել դեպի հորիզոններ, հայերենն է կոչել՝ սերնացում հանձնել հողին, ծիգ սլացել է առաջ-հայերենն է, չես բռնացել բարու ոգուն-հայերենն է, վերջին պատառն ես կիսել ընկերներիդ հետ-հայերենն է, «Երբ քայլելիս Քիրս-Մասիսի փայլը կա դեմքիդ, ու մորմոք կա անմեկնելի-հայերենն է, վերջապես՝

*Երբ մայրենի բառի համար, Երբ մայրենի տառի համար, տակից քառսուն ջաղացքարի կարող ես դու վեր համբառնալ, անգամ շունչդ ու հոգիդ տալ - Հայերենն է...*

*Որն է, ահա, մեր սուրբ լեզուն, Մետրոպատառ հայերենը, իմ մայրենին:*

Վ. Հակոբյանի համար հայրենիքն ունի իր պատկերն ու կենսագրությունը: ԱՐՑԱՄԵ է նրա սուրբ օջախի անունը, որից սկիզբ առած սիրո ծիսանքները գնում-հասնում են գալիքին:

Բանաստեղծի Արցախապատումն ունի կոնկրետ առանձնահատկություններ ու թարմության երանգներ: Ինքնատիպության այդ կողմերն է նկատի ունեցել անվանի գրականագետ Ս. Սարինյանը՝ գրելով. «Մինչև հիմա բանաստեղծների երգը եղել է Դարաբաղի մասին, բայց այժմ Դարաբաղն ինքն է դառնում երգ, և Հակոբյանի ինքներգությունն արդեն Դարաբաղի երգն է: Տեղի է ունենում օբյեկտի և սուբյեկտի ներհյուսումը բանաստեղծական գաղափարի մեջ: Եվ երկի այս ներհյուսումն է, որ արտակարգ շայլություն է տալիս բանաստեղծի ներշնչանքին՝ բանաստեղծությունը գրեթե դարձնելով կեցության ձև, անհատականության հատկանիշ և լիներություն պարագա»:

Վ. Հակոբյանի տաղանդը, հիրավի, աչքի է ընկնում անհատականության հատկանիշներով: Դրանք երևում են և՛ բանաստեղծությունների ձևերի, և՛ արտահայտած գաղափարների խորքերի մեջ: Նրա երգը զգացմունքների և իմաստությունների ներդաշնակ ամբողջականություն է: Ինչի մասին էլ խոսում է նա, դատում է պատկերներով, հոգեբանական շեշտերով, անմիջական ներշնչանքով: *Անհաղորդ՝ ժայռին ծվարած ծաղկի ծարավ տենչանքին, Ձորն ի վար ծգվում ու հեռանում է գետակը փոքրիկ... ծաղիկը, սակայն, թևը երկարում, Ու խորն է ծգվում արմատն ավելի, Ականջը լարած կարծես շատ հեռվից, հեռվից ճաճանչող ինչ-որ ծայրերի, Դե ի՞նչ, ծորակով հեռացող ջրի Կարկաչն է միշտ նրան դալար պահում:*

Ժամանակն է բարձրաձայնելու, որ Վարդան Հակոբյանի պոեզիան Արցախ աշխարհի զեղեցկության, իմաստության, խիզախության, հույսի և հավատի աստվածահաճ պատկերն է՝ միտված գալիք սերունդներին:

**Սուրբապ ԽԱՆՅԱՆ**  
**Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ**

... ՀԱՅԿԱԿԱՆ ՄՆԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ՕԿՈՒՂԱՅՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ

6 Պարզեցման պետական բարձր ներկայացուցչի կողմից այսպիսի հայտարարությամբ փաստվում է այն, որ Արդեթյանը վարում է հայկական մշակութային ու պատմական հետքը Արցախի տարածքից բնաջնջելու հստակ ծրագրային քաղաքականություն՝ այս անգամ արդեն բացահայտ կերպով սպառնալով վերացնել ու ջնջել Արցախի հայկական եկեղեցիների արձանագրությունները: Տեսնելով, որ միջազգային հանրությունը ոչ այնքան դրական է արձագանքում 44-օրյա պատերազմից հետո Արդեթյանի կողմից հայկական պատմական եկեղեցիների բացահայտ վանդալիզմի գործողություններին, նա ընտրեց այլ տարբերակ. պահպանել հայկական եկեղեցիները՝ վերացնելով հայկական հետքը, բռնաշարժանքներով քրիստոնյա հանրության ողջ ժառանգությունը:

Այս առիթով հարկ է նշել, որ Արցախի տարածքում գոյություն չունեն եկեղեցիներ, որոնք աղվանական են և հայերի կողմից ազուլված են արձանագրություններով: Արդեթյանի «գիտական հանրուքը» չունի մասնագիտական բավարար գիտելիք՝ հասկանալու հայ քրիստոնեական մշակույթն ու հուշարձանները, ինչի վկայություններն են իրենց իսկ հրապարակումները, որոնք սահմանափակվել են մահմեդական ճարտարապետության ներկայացումով: Այն, ինչ նրանք կարող են, ամուռ են հստակ, խեղաթյուրել, ավերել և կեղծել: Ավելին, եթե ենթադրյալ հանձնաժողովը փորձի իրականացնել հայկական մշակութային ցեղասպանության այդ ծրագիրը, դրանով նրանք կզրկեն արցախահայության մշակութային ժառանգությունն իր իսկության իրական ֆենոմենից, կխեղաթյուրեն պատմական ժամարտությունը և սերունդներին կզրկեն իր իսկ համայնքի կողմից ստեղծված մշակույթը վայելելու և դրանով ապրելու հնարավորությունից: Այսպիսի քաղաքականությունը խտրական վերաբերմունք է, որը խախտում է նաև «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրով» ամրագրված մտքի, խղճի, դավանանքի ազատությունը և այդ ազատության հետևանքով ստեղծված ժառանգությունը իր ուզած ձևով արժևորելու իրավունքը: Սա նաև մշակութային իրավունքի կոպիտ խախտում է:

Իսկության սկզբունքների պահպանության Նարայի փաստաթուղթը նշում է, որ մշակութային արժեքների՝ հակամարտություններում հայտնվելու դեպքում պահանջվում է մշակութային արժեքների հանդեպ լեզվափոխության ճանաչում: Կարևոր է ընդգծել ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործունեության հիմնարար սկզբունքները, համաձայն որոնց՝ մշակութային ժառանգության պահպանության և կառավարման պատասխանատվությունը վերապահված է այն համայնքին, որն ստեղծել է մշակութային ժառանգության իսկության փաստը ոչ մի դեպքում չպետք է ստորադասվի (*Իսկության վերաբերյալ Նարայի փաստաթուղթ, 8-րդ կետ*):




ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՅԻՆ

ՀԵՏԱԵՐԲԻՐ ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Խնդիր 1. Ի՞նչ անկյուն են կազմում ժամացույցի մեծ և փոքր սլաքները ժամը 3 անց 10 րոպեին:


Լուծում: Մեծ սլաքը 1 ժամում գծում է 30° անկյուն, հետևաբար 1 րոպեում գծում է 0,5° անկյուն: Փոքր սլաքը 1 ժամում գծում է 360°, հետևաբար 1 րոպեում գծում է 6° անկյուն: 10 րոպեում փոքր սլաքը կգծի 5° անկյուն: Արդյունքում կստանանք 90° - 60° + 5° = 35° անկյուն (նկ. 1):



Նկ. 1


Խնդիր 2. ABC եռանկյան A անկյունը 60° է, BP-ն և CQ-ն եռանկյան բարձրություններն են, M-ը BC կողմի միջնակետն է: Ապացուցել, որ PQM եռանկյունը հավասարակողմ է:

Լուծում: Թող  $\angle PBQ = \alpha$ : Հասկանալի է, որ  $\alpha = \angle APB = 90^\circ - 60^\circ = 30^\circ$ : P և Q կետերը պատկանում են BC տրամագծով շրջանագծին, հետևաբար  $MP = MQ$  և  $PMQ$  կենտրոնական անկյունը երկու անգամ մեծ է  $\angle PBQ$  անկյունից (նկ. 2): Հետևաբար  $PQM$  եռանկյունը հավասարաչափ է, որի գագաթի անկյունը 60° է, ուստի այն հավասարակողմ է:



Նկ. 2

Խնդիր 3. Շրջանագծին ներգծած է ABCD քառանկյունը: DC ճառագայթի վրա տեղադրված է DA, հատվածը հավասար BC կողմին, իսկ BA ճառագայթի վրա BC, հատվածը հավասար AD: Ապացուցեք, որ BD ուղիղը կիսում է A1C1 հատվածը:




Նկ. 3

Լուծում: BD ուղիղն A1 և C1 կետերից իջեցրած ուղղահայացները հավասար են  $DA_1 \sin BDC = BC \sin BDC$  (նկ. 3): Երկու թվերն էլ  $BC \sin BDC$  և  $AD \sin ABD$  հավասար են շրջանագծի տրամագծին, որին ներգծված է քառանկյունը:

Խնդիր 4. Սեղանի բարձրությունը, որ իանկյունագծերը փոխուղղահայաց են, հավասար է 4 սմ, իսկ անկյունագծերից մեկը՝ 5 սմ: Գտնել սեղանի մակերեսը:

Լուծում: Թող ABCD սեղանի հիմքը AD-ն է, AC անկյունագիծը հավասար 5-ի: ABC եռանկյան վրա կառուցենք ACBE զուգահեռագիծը (նկ. 4): ABCD սեղանի մակերեսը հավասար է ուղղանկյուն եռանկյան DBE-ի մակերեսին: Թող DBE եռանկյան բարձրությունը BH-ն է:




Նկ. 4

Պյութագորի թեորեմի համաձայն  $EH^2 = BE^2 - BH^2 = 5^2 - 4^2 = 3^2$ : Ուղղանկյուն EDB և EBH եռանկյունները E ընդհանուր անկյունով նման են, հետևաբար  $ED:EB = EB:EH$  և  $ED = \frac{EB^2}{EH} = \frac{25}{3}$ : Հետևաբար  $S_{DBE} = \frac{EB \cdot BH}{2} = \frac{50}{3}$ :

Խնդիր 5. ABC հավասարաչափ եռանկյան BA և BC սրունքների վրա նշված են Q և P կետերը, այնպես, որ  $\angle ACQ = 60^\circ$  և  $\angle CAP = 50^\circ$  (նկ. 5ա): Գտեք APQ անկյունը, եթե  $\angle B = 20^\circ$ :


Լուծում: Թող O-ն B անկյան կիսորդի և CQ ուղղի հատման կետն է, (նկ. 5բ): ACO եռանկյունը հավասարակողմ է: ACP եռանկյան A և P անկյունները հավասար են 50°: Հետևաբար  $AO = CO = AC = CP$  Թող M կետը AO և BC ուղիղների հատման կետն է: MPO եռանկյան M և O անկյունները հավասար են 40°: Ուրեմն  $OP = MP$ : P և Q կետերը հավասարահեռ են O և M կետերից, հետևաբար PQ ուղիղը OM հատվածի միջնուղղահայացն է: Այդ պատճառով  $\angle APQ = \angle APO + \angle OPQ = 30^\circ + 50^\circ = 80^\circ$ :



Նկ. 5ա

Նկ. 5բ

Խնդիր 6. Տրված է հավասարաչափ եռանկյունը, որի հիմքը BC-ն է, իսկ գագաթի անկյունը՝  $\angle A = 80^\circ$ : Եռանկյան ներսում ընտրված է M կետն այնպես, որ  $\angle MBC = 30^\circ$  և  $\angle MCB = 10^\circ$  (նկ. 6): Գտնել AMC անկյունը:



Նկ. 6

Նկ. 6ա

Նկ. 6բ


Լուծում: ACM եռանկյունը հավասարաչափ է, որի  $\angle C = 40^\circ$ :  $AM = CM$  հավասարությունը կարելի է ապացուցել տարբեր եղանակներով:

Առաջին եղանակ: Թող O կետը BM ուղղի և A անկյան կիսորդի հատման կետն է, (նկ. 6ա): CAO և CMO եռանկյունները հավասար են, ըստ կողմերի և նրանց առընթեր անկյունների հավասարության:

Երկրորդ եղանակ: AC կողմի վրա կառուցենք ANC հավասարակողմ եռանկյունը, (նկ. 6բ): BAN եռանկյունը հավասարաչափ է, և  $\angle ABN = 80^\circ$ , հետևաբար  $\angle CBN = 30^\circ$ : Որից հետևում է, որ BMC և BNC եռանկյունները հավասար են ըստ կողմերի և նրանց առընթեր անկյունների հավասարության:


Խնդիր 7. ABC եռանկյան մեջ տարված է BD կիսորդը: E կետը նշված է այպես, որ DE և AB հատվածները հատվում են K կետում,  $AE = CD$  և  $\angle EAB = \angle ACB$ : Ապացուցել, որ  $EK = KD$ :

Լուծում: D կետից տանել ուղղահայացներ DP-ն և DQ-ն AB և BC կողմերին, իսկ E կետից՝ ER ուղղահայացն AB կողմին: ARE և CQD ուղղանկյուն եռանկյունները հավասար են ըստ ներքնաձգի և սուր անկյան հավասարության, ուրեմն  $ER = DQ = DP$ :




Նկ. 7

Խնդիր 8. ABC եռանկյան B անկյունը հավասար է 70°, C անկյունը՝ 50°: AB և AC կողմերի վրա նշված են M և N կետերն այնպես, որ  $\angle MCB = 40^\circ$  և  $\angle NBC = 50^\circ$ , (նկ. 8): Գտնել NMC անկյունը:



Նկ. 9




Նկ. 8

Լուծում: Թող O կետը BN և CM ուղիղների հատման կետն է (նկ. 8):  $\angle BCO = 50^\circ$ ,  $\angle COB = 40^\circ$ , հետևաբար  $NB \perp CM$ : CO հատվածի վրա անջատենք M' կետը այնպես, որ  $OM' = OM$ : M'OB և MOB եռանկյունները հավասար են:  $\angle MNB = 60^\circ$ : Որից հետևում է, որ  $\angle NMC = \angle NM'O = 30^\circ$ :

Ռ. ԱՆԱԵՆՅԱՆ

ԱՐԴՅ ֆիզիկա-մաթեմատիկայի ամբիոն, մ.գ.թ., պրոֆեսորի պաշտոնակատար



ՄԱՐԶԱԿԱՆ

ԱՎԱՆՂԱԿԱՆ ԿԱՐԱՏԵՒ



«Ի՞նչ է ավանդական կարատեն». թվում է, թե պարզ հարց է, բայց այդ հարցին պարզապես չկա միանշանակ պատասխան: Բայց պետք է լինի, չէ՞: Միգուցե պատասխանը սկսենք փնտրել «ավանդական» բառի մեջ: Ի՞նչ է ավանդույթը: Դա փորձված հմտությունների համախումբ է, որը փոխանցվում է սերնդեսերունդ, մնում է անփոփոխ ժամանակի փոփոխության հետ: Այսինքն՝ եթե մի քիչ հեռանանք բառի նշանակությունից, ապա ստացվում է, որ ավանդական կարատեն այն կարատեն է, որն ուսուցանելու հնարներն ու մեթոդներն անփոփոխ հասել են մեզ: Իսկ այդպես՞ս է, արդյոք: Հնարավոր է դա: Անփոփոխ կարատեն դեմտո կարատեն է, որի վրա չեն անդրադառնում ժամանակի փոփոխությունները: Ճապոնիայում «դենտո» բառը նշանակում է՝ ավանդույթների հանդեպ հավատարմություն, «դեն» արմատն առկա է «դենսեցու» բառի մեջ, որը նշանակում է՝ բանահյուսություն: Երբ ճապոնիայում ավանդական ոճերի վարպետներից որեւէ մեկին հարցնում են, թե ինչու է պետք կատարել հենց այդպես, նա պատասխանում է, որ վարպետն է այդպես սովորեցրել: Դրանում է կայանում

ավանդական ճապոնական մոտեցման հիմնական տարբերությունը ժամանակակից արեւմտյան մոտեցումից. Արեւմուտքում ուսումնառության մեթոդները հիմնված են գիտական հետազոտությունների արդյունքի վրա: Այս դեպքում էլ այն միտքն է առաջանում, որ այն, ինչը չի զարգանում, վաղ թե ուշ մահանում է: Անվիճելի է, իսկապես այդպես է: Բայց ավանդական կարատեն շարունակում է գոյատևել: Իսկ միգուցե «ավանդական կարատեն» բառակապակցությունը ներառում է մարզելու որեւէ հատուկ մեթոդ, հայացք: Կամ որեւէ հատուկ տեխնիկա, որը հարիր է այդ անվանումը կրող բոլոր դպրոցներին ու ֆեդերացիաներին: Բայց ոչ: Վարպետը հանդիսանում է յուրատիպ տեխնիկայի կրողը: Իսկ ֆեդերացիան ղեկավարող օրգան է: Այն դեպքում, երբ ֆեդերացիան մեծ է, ինչպես օրինակ WTKF-ITKF, որը միավորում է աշխարհի բոլոր մայրցամաքներին, չի կարող բավարարվել տեխնիկական մեկ փորձագետով: Այս դեպքում խոսք է գնում փորձագետների կոլեգիայի մասին: Նրանցից յուրաքանչյուրը կրում է որոշ յուրատիպ հմտություններ: Առավել եւս տեխնիկական կոմիտեի կազմը ժամանակի ընթացքում կարող է փոխվել: Ուրեմն, եթե ավանդույթ չէ եւ ոչ էլ հատուկ տեխնիկա, ապա ի՞նչ է դա:

Հարցի պատասխանը գտանք Արցախի ավանդական կարատեի դո ֆեդերացիայի մարզիչ, սեւ գոտի երրորդ դաս, Եվրոպայի չեմպիոն Տիգրան ԳԵՎՈՐԳՅԱՆԻ շնորհիվ, որը պարզաբանեց, որ ճշմարիտ պատասխանը բուրդի մեջ է:

**- Տիգրան, ի՞նչ է բուրդը, եւ ինչո՞ւ է հենց դրանով առանձնանում ավանդական կարատեն:**

- «Բուրդ» բառը բաղկացած է երկու մասից. «բու»՝ մարտիկ եւ «դո»՝ ճանապարհ, ավելի պարզ ասած՝ բուրդն այն ուղին է, որն անցնում է մարտիկը: Որպեսզի հասկանանք, թե ինչ է բուրդը, պետք է այցելենք ճապոնիա օրինակ՝ 15-17-րդ դարեր...: Շուրջ հինգ հարյուրամյակներ երկիրը ղեկավարել են գինվորները: Ողջ իշխանությունը Սյոգունին է, որը գլխավոր հրամանատարն է: Բոլորը կռվում են բուրդի հետ: Սամուրայը պրոֆեսիոնալ մարտիկ է: Նրա կյանքը մարտն է: Ավանդական կարատեն վերաբերմունքն է շուրջը կատարվողի նկատմամբ: Դա լոկ մարմնամարզություն չէ, ոչ էլ մրցաշարերից ստացած միավորները, ոչ էլ «Արագ, երկար, բարձր»-ը, այլ «Այստեղ եւ հիմա»-ն է: Ամեն ինչ դրված է քարտեզի վրա: Մարտահրավեր՝ արձագանք: Տվյալ դեպքում ավանդույթը քո գործի հանդեպ վերաբերմունքի անփոփոխ փոխանցումն է, գործի՝ ինչպես մարտի: Հենց դա է փոխանցվում ավանդական կարատեում, ավանդույթը անփոփոխ վերաբերմունքի փոխանցումն է:

**- Իսկ ինչո՞վ է ավանդական կարատեն տարբերվում սպորտայինից:**

- Պատկերացնենք, որ ավանդական կարատե պարապող մարզիկը դուրս է եկել տասամի (մրցագորգ): Դեպի նա է շարժվում մյուս մարզիկը, որը նույնպես ավանդական կարատե է պարապում: Եվ առաջինը, եւ երկրորդը իրար մեջ տեսնում են ոչ թե հակառակորդի, այլ՝ իրենց առաջ մղող գործոնի: «Սա իմ ուսուցիչն է»,- ասում են նրանք միմյանց: Ես հարգում եմ ինձ, քանզի միայն իրապես ուժեղ մարդը կարող է անցնել ամենօրյա այսպիսի փորձություններով: Ես հարգում եմ ինձ հետ տասամի դուրս եկողին: Նա նույնպես հարթահարում է այսպիսի դժվարություններ, ինչպես որ ես: Ես նրան ասում եմ շնորհակալություն նրա համար, որ նա առաջիկա մենամարտում ինձ ցույց կտա իմ թույլ տեղերը, եւ ես կհիմանամ՝ ինչպես հետագայում զարգա-



նալ, ինչ ուղղությամբ աշխատել: Հիմա պատկերացնենք, որ մի քիչ փոխում ենք պատկերը: Ես դուրս եմ եկել մրցակցելու: Ես եմ արա՞գ, թե՞ ինքը: Ե՛ս եմ երկար ցատկել, թե՞ նա: Ե՛ս շատ խիճեցի նրան, թե՞ նա՞ ինձ: Սպորտը լավ բան է: Դրա ներառումը կարատեի մարզումների մեթոդների մեջ թույլ է տվել կարատեն դարձնել իսկապես դիտարժան եւ մասսայական: Սպորտը լավ մոտիվացիա է աճելու համար: Բայց մենք ուզում ենք ավելին, մենք ուզում ենք բուրդ: Այդ պատճառով մենք պարապում ենք ավանդական կարատե դո:

**- Հետաքրքիր է, թե ինչպես եւ ինչ սկզբունքներով տասնամյակներ առաջ Արցախում հիմնադրվեց ավանդական կարատեի ֆեդերացիան, որն Արցախում գործող ամենաառաջին ֆեդերացիաներից է:**

- Արցախի ավանդական կարատեի դո ֆեդերացիան ստեղծվել է 1994թ. դեկտեմբերին: Սկզբնական շրջանում պարապմունքներն անցնում էին «Դիմամո» մարզադահլիճում, որտեղ մարզվում էին միայն մեծահասակներ՝

ներկայում ֆեդերացիայի նախագահ եւ գլխավոր մարզիչ սեմսեյ Արամ Գեւորգյանի գլխավորությամբ: Տարիների ընթացքում ֆեդերացիան իր շուրջն է համախմբել հազարավոր մարզիկների՝ նպատակ ունենալով դաստիարակել ֆիզիկապես եւ հոգեպես ամուր մարզիկների: Ֆեդերացիան հավատարիմ է մնում ավանդական կարատեի սկզբունքներին ու պահպանում է ավանդական կանոնները: Խոսելով սկզբունքներից, պետք է նշել, որ դրանք շատ են, բայց առաջին հերթին կարեւորում ենք կարգապահությունը: Դաստիարակությունը սկսվում է կարգապահությունից: Մարզիկը նախ սովորում է դահլիճ մտնելու եւ դուրս գալու կանոնները, մարզչին եւ մարզիկներին դիմելու ճիշտ ձևը, սովորում է հարգել: Մարզադահլիճում են սկսում մարտիկ դառնալու քայլերը: Մարզիկը սովորում է մարտ վարել՝ չվնասելով ոչ իրեն, ոչ դիմացիին, իսկ եթե պետք է պաշտպանվել ու վնասագեթծել, ապա սովորում են մեկ հարվածով շարքից հանել հակառակորդին: Բայց այդ հարվածը ճիշտ կատարել կարողանալու համար պահանջվում են երկար տարիների ջանքեր: Տոհմե վագա. այդպես է կոչվում մեկ հարվածով մարտն ավարտելը: Իսկ լավագույն մարտը ավանդական կարատեում համարում են չկայացած մարտը: Այսինքն, մարզիկն իր մեջ այնքան ուժ է ունենում սովորածի շնորհիվ, որ կարողանում է չօգտագործել այդ հմտությունները եւ մարտն ավարտել ու հաղթել առանց կռվելու: Մրցումների ժամանակ էլ մեր նպատակն այն չէ, թե ով է ուժեղ, ով թույլ: Մարզիկը ցուցադրում է իր մեկ տարվա սովորածը տասամու վրա, իսկ մրցավարները գնահատում են եւ վեր հանում այն կետերը, որոնց վրա պետք է ավելի աշխատել լավ մարզիկ լինելու համար:

**- Բացի ավանդական կարատեի առաջնություններից մարզիկները կարո՞ղ են մասնակցել կարատեի այլ ճյուղերի մրցաշարերի:**

- Կարող են մասնակցել ավանդական ոճով ցանկացած մրցաշարի: Եթե մրցաշարի կանոնները համապատասխանում են մեր կանոններին, ուրեմն ճանապարհը բաց է: Սպոր-

տային կարատեի մրցումների կանոնները տարբերվում են, այդ պատճառով մենք չենք մասնակցում:

**- Նշեք ֆեդերացիայում պարապող մարզիկների թիվը, եւ ո՞րն էք համարում ֆեդերացիայի համար ամենամեծ ձեռքբերումը:**

- Ներկայում ունենք շուրջ 200 մարզիկ եւ 5 մարզիչ: Ավանդական կարատեի մարզիկը երկար ճանապարհ է անցնում՝ սկսած առաջին գոտուց: Մինչեւ սեւ գոտի հասնելը մարզիկը դպրոց է անցնում, որից հետո՝ մինչեւ սեւ գոտու հինգ դասը, որը համեմատվում է



համալսարանի կրթության հետ: Ֆեդերացիան իր գործունեության տասնամյակների ընթացքում ունեցել է Եվրոպայի չեմպիոններ, աշխարհի չեմպիոններ եւ մրցանակակիրներ, որը, իհարկե, մեծ ձեռքբերում է: Բայց մենք ուրախ ենք եւ մեծագույն հաջողություն ենք համարում այն, որ մեր փոքրիկ Արցախն ունի ավանդական կարատեի սկզբունքներով դաստիարակված հազարավոր մարզիկներ ու շատ մարզիչներ, որոնք հասել են սեւ գոտու եւ գնացել ավելի առաջ: Դրանք այն մարդիկ են, ովքեր իրենց ներսում ձեւավորած առողջ, հաճելի մթնոլորտը կարողանում են փոխանցել շրջապատին եւ նպաստում են կատարելագործման: Իսկ շատ ավելի կարեւոր է, որ մեզանից յուրաքանչյուրը պոտենցիալ մարտիկ է ներկայում եւ ապագայում մեր երկրի համար՝ ֆիզիկապես ամուր, հոգեպես կոփված ավանդական կարատեի դո մարտավեստի օրինակելի սկզբունքներով:

**- Ներկայացրեք, խնդրեմ, ֆեդերացիայի ընթացիկ եւ հեռանկարային ծրագրերը:**

- Մարտի վերջին նախատեսում ենք կազմակերպել Արցախի առաջնություն, լավագույն մարզիկները ապրիլին կմասնակցեն ՀՀ առաջնության: Մայիսի սկզբին նախատեսում ենք մասնակցել ՀՀ-ում Արարատի գավաթի միջազգային առաջնության, որի հետ միաժամանակ կմասնակցենք սեմսեյ Վաղմիր Կվիչինսկու վարած միջազգային սեմինարին: Այնուհետ սպասվում են աշխարհի առաջնություններ՝ WTKF եւ ITKF կազմակերպությունների կողմից կազմակերպվող:

Օգտվելով հնարավորությունից՝ տեղեկացնում են, որ ֆեդերացիայի դռները բաց են նոր դիմորդների համար՝ սկսած 5 տարեկանից: Այցելեք, փորձեք, եղեք առողջ ու կոփված:

Ս. ԱՎԱԳՅԱՆ



ՄԵՐ ՉԵՄՊԻՈՆՆԵՐԸ

ՄԻՒՍՏԻՆԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ. ՄԵՆ ԿԱՄՔԻ ՈՒԺ, ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ, ԶՆԱՆՁՆԿՈՒՄ



Ուրախությամբ ենք նշում, որ Արցախում քիչ չեն այն մարզիկները, ովքեր մանուկ հասակից պարապելով որեւէ մարզաձեւով, ոչ միայն հավատարիմ են մնում իրենց նախընտրած մարզաձեւին, այլև, մեծ նվիրումով անդադար չարունակելով մարզումները, սպորտում հասնում են բարձր արդյունքի նաեւ հասուն տարիքում: Մարզական էջի հետետրոդներին քաջասանոք մարզիկ Միխայիլ Մխիթարյանը է մեր հերթական գրուցակիցը, որն իր մարզական ձեռքբերումների շնորհիվ արցախցու ուժն ու կամքը կարողանում է փայլուն ցուցադրել միջազգային մրցախաղերում: Սպորտը մեծ ուժ է, որով կարելի է Արցախում աշխարհին ճանաչելի դարձնել արցախցիների համար այս բարդ ժամանակաշրջանում: Թերեւս դա է պատճառը կամ մոտիվացիան, որ արցախցի մարզիկներն աննախադեպ հաջողություններ են գրանցում երկրից դուրս կայացող մրցաշարերում:

Միխայիլ Միխիթարյանը ծնվել է 1999թ. մարտի 1-ին: Փոքր տարիքում ոտք է դրել կարատե մարտարվեստի հետաքրքրաշարժ աշխարհ: Սկսել է պարապել չորս տարեկանից: Հետագա տարիներին ընկղմվելով կարատեի բազմազան ոճերի ու հնարքների մեջ՝ տիրապետել ու կատարելագործվել է: Պարապում է սպորտային կարատե, որը դարձել է օլիմպիական մարզաձեւ, Պարապում է սպորտային կարատե, որը դարձել է օլիմպիական մարզաձեւ,

ինչպես նաեւ ֆուդոկան կարատե եւ ավանդական կարատե: Միխայիլը բազմաթիվ մրցաշարերի հաղթող է: Եվրոպայի կրկնակի չեմպիոն, աշխարհի գործող չեմպիոն, 37 օլիմպիական կարատեի հնգակի չեմպիոն եւ ազգային հավաքականի անդամ է:

Մարզական բացառիկ ընդունակությունների տեր մարզիկն իր առօրյան անց է կացնում հազեցած պարապումների մեջ: Պրոֆեսիոնալ սպորտի ճանապարհը շատ է բարդ, պետք է կարողանալ շատ ժամանակ տրամադրել դրան: Միայն լիարժեք նվիրումով ու աշխատասիրությամբ կատարված պարապումներն են մղում դեպի հաջողություն: Այդպես է մտածում չեմպիոնը:

- Միխայիլ, Ձեր բազմաթիվ մարզական հաջողություններից ո՞րն եք ավելի շատ կարելիորում:

- Առանձնանշում եմ 2019թ. Գերմանիայում կայացած՝ Աշխարհի առաջնությունում նվաճած ոսկե մեդալ: Աշխարհի առաջնությունից դա իմ առաջին մեդալն է եւ միակը այս պահի դրությամբ:

- Անցած տարվա վերջին դարձաք Եվրոպայի չեմպիոն: Պատմեք դրա մասին:

- Եվրոպայի առաջնությունն անցավ 2021թ. հոկտեմբերի 28-30-ը Սերբիայի Բելգրադ քաղաքում: Դա ավանդական կարատեի ITKF առաջնություն էր կատարում մրցաձեւում 21+ (սենյորների միջեւ) կարգում, որտեղ ես գրավեցի առաջին տեղը: Արժանի

մրցակիցներ ունեի, լավ մրցակցություն կար, նրանք բավականին ուժեղ էին: Մեծահասակների տարիքային կարգում սա իմ առաջին մեդալն է: Դրա համար էլ սա ինձ համար շատ կարեւոր հաղթանակ է, քանի որ մինչ այդ ես մեդալներ էի ստանում երիտասարդների միջեւ պայքարում:

- Սպորտից բացի ինչո՞վ եք զբաղվում, ինչպե՞ս է անցնում չեմպիոնի առօրյան:

- Հիմա ես կենտրոնացած եմ միմիայն սպորտի վրա: Ուզում եմ նոր բարձունքների հասնել:

- Իսկ ի՞նչ երազանքներ ու նպա-



տակներ ունեք:

- Ինչ վերաբերում է սպորտին, իմ նպատակը մշտապես արդյունքների հասնելն է ու միշտ հաղթելը:

- Լավ մարզիկ դառնալու եւ սպորտում մշտապես հաջողությունների հասնելու համար ի՞նչ է անհրաժեշտ:

- Պետք է ունենալ մեծ կամքի ուժ, աշխատասիրություն եւ երբեք չհանձնվել:

- Ո՞րն եք համարում մարզական Ձեր ամենամեծ հաջողությունը:

- Հիմա ես նվաճեցի ոսկե մեդալ Եվրոպայի առաջնությունում մեծահասակների միջեւ պայքարում: Մրցակիցներ ունեի, որոնք ինձանից մեծ էին շուրջ 8-10 տարով: Նրանք շատ փորձառու եւ դժվար մրցակիցներ էին: Այդ պատճառով այս մեդալն ինձ համար լավ հիշվող է:

- Առաջիկայում ի՞նչ եք պատրաստվում անել:

- Քանի դեռ իմ ծրագրերն իրականություն չեն դարձրել, չեմ ուզում դրանք արտահայտել: Իսկ երբ կիրականացնեմ, այն ժամանակ անպայման կասեմ:

- Ցանկանում եք հասնեք մարզական նոր հաջողության, իրականացնեք Ձեր բոլոր նպատակները: Ընդհակառակը ժամանակ հատկացնելու եւ հարցազրույցի համար:

- Ձեզ շնորհակալություն:

(Նկարում՝ Միքայել Միխիթարյանի հետ սեւ գոտի 10-րդ դաս վարպետ, կղզում են Սոկե, Իլյա Յորգան է):

Սոկյա ԱՎԱԳՅԱՆ

ՄԱՐՏՈՒՆԻՈՒՄ ՏԵԽՆՈԳՊՐՈՋ ՍՏԵՂԾԵԼՈՒՆ ՈՒՂՎԱԾ ԴՐԱՄԱՆԱՎԱԲ-ԱՐՇԱՎԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է



3 ԲԱՆՆԻ ԴԵՊԻ ԵՐԱՅՆՆԵՐԻ ՏԵԽՆՈԳՐՈՋ

Արցախի «ՄՈՒՆԵ» տեխնոլոգիայի ընկերությունը այսուհետ այսպես է կոչվելու «Տեխնոպարկ Արցախի Մարտունիում» նախագիծը:

Արցախի կառավարությունը միացել է Արցախի «Մունե» տեխնոլոգիայի ընկերությանը ստեղծելու նախագիծին՝ այդ թվում ֆինանսական աջակցություն տրամադրելով:

Արցախում Տեխնոլոգիայի կրթական նախագիծ է ՏՏ ոլորտում, որն իրականացվում է «Ես» կրթական հիմնադրամի կողմից: Նպատակը երեխաներին որակյալ տեխնիկական գիտելիքներ տալն է, ինչը նրանց համար զարգացման հեռանկարներ կստեղծի իրենց իսկ բնակավայրերում և ճանապարհ

կրթից դեպի ՏՏ շուկա:

Նախագծի հեղինակը մաթեմատիկոս և ծրագրավորող Աշոտ Ավանեսյանն է, որն Ստեփանակերտում ուսման և երևանում աշխատանքի երկար տարիներից հետո վերադարձել է հարազատ գյուղ և մշակել է Տեխնոլոգիայի գաղափարը: Գաղափարի իրականացման համար անհրաժեշտ է շուրջ 68 մլն դրամ:

«Մարտունու տեխնոլոգիայի Մարտունու քաղաքի և ենթաշրջանի գյուղերի տեխնոլոգիական ապագան է: Տեխնոլոգիայի ստեղծմամբ մենք տեխնոլոգիական կրթությունը դնելու ենք որակական նոր հիմքերի վրա: ԱՅ ԿԳՄՍ նախարարությունը սատար է կանգնում այս բացա-

ռիկ նախագծի իրականացմանը՝ կրկնապատկելով մինչև 14 միլիոն դրամ արված ցանկացած ներդրում: Մարտունու տեխնոլոգիայի մեր կրթական հաղթարթունքն է», - ասում է ԱՅ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Լուսինե Դարբասյանը:

Շարժական լաբորատորիաների հետ մեկտեղ ապագայում ստեղծվելու է մեծ տեխնոլոգիական դպրոց: Շենքն ունենալու է երեք կահավորված սրահ, մեկ ընդհանուր աշխատանքային սենյակ և սանհանգույց: Նախագծի շրջանակում Հաղորտու գյուղապետարանը տրամադրել է համայնքապետարանի շենքը:

Վերանորոգումից հետո այն կկարողանա ընդունել 100 երիտասարդի, իսկ նախագծի շահառուների թիվը կհասնի 280-ի: Հետագա հինգ տարվա ընթացքում պատրաստվելու է շուրջ 270 ՏՏ մասնագետ, ինչը միայն աշխատավարձի տեսքով երկիր կբերի շուրջ 1 մլրդ դրամ, ինչպես նաև կսկսի գործել ավելի քան 10 ՏՏ ընկերություն:

«Այս կրթական ծրագրերը մշակվել էին դեռ 2017 թվականին, որպեսզի ուղղակի մի քիչ ակտիվացնեք Արցախի գյուղերի կյանքը, երեխաների և դեռահասների կրթության մեջ փոփոխություններ անենք, բայց ամենակարևորը՝ արդիականացնենք կրթության ոլորտը: Ամեն ինչ սկսվեց նրանից, որ

մենք ուղղակի համակարգիչներով շրջում էինք գյուղերով: Այնուհետ այս գաղափարի շուրջ միավորվեցին ՏՏ ոլորտի ավելի քան 30 մասնագետներ: Հիմա մեր ուսանողական նախաձեռնությունը դարձել է մեծ տարածաշրջանային նախագիծ, որին միացել է և Արցախի կառավարությունը», - ասում է «Ես» կրթական հիմնադրամի տնօրեն Աշոտ Ավանեսյանը:

«Ես» կրթական հիմնադրամը ստեղծվել է 2019թ. Աշոտ Ավանեսյանի և նրա կնոջ՝ Լուիզայի կողմից: Այսօրվա դրությամբ հիմնադրամի դասընթացներն օգնել են արդեն 80

երեխա է մասնակցում դասընթացին, մոտակա երկու ամիսների ընթացքում այդ թիվը անցնելու է 120-ից: Եվս 50 աշակերտ ունի Ստեփանակերտի լաբորատորիան: Հաջորդ տարվա սկզբին «Ես» կրթական հիմնադրամը կունենա ՏՏ գիտելիքներով ավելի քան 200 շրջանավարտ:

«ՌեԱրմենիա» համագործակցության և դրամահավաքի հարթակի նախաձեռնողներն են Tufenkian Foundation-ը, TheCrowdFunding Formula-ն, MerakiPal-ը, Global AM-ը, Techնոտուն-ը, Backbone-ը: Հարթակը հնարավորություն է ընձեռում

յուրաքանչյուրին բարձրաձայնել Հայաստանի խնդիրները, ինչպես նաև առաջարկել այդ խնդիրները լուծող նախագծեր, կիսվել փորձով, հմտություններով կամ ֆինանսական և նյութական ռեսուրսներով: «ՌեԱրմենիա»-ն իր հերթին ստեղծում է միջավայր փոխադարձ վստահության և թափանցիկության ապահովման համար, որն արդյունավետ համագործակցության հիմքն է:

Հարթակի ստեղծմանն արդեն միացել են տարբեր կազմակերպություններ, որոնց թվում են Krisp-ը, gg-ն, 10Web-ը, Art Lunch-ը, UATE-ն, Ucraft-ը, Picsart-ը, Digitain-ը, Easy D'Marc-ը, COAF-ը, Onex-ը, AppearMe-ն, VPOS Testing-ը, BANA-ն, Zigzag-ը, Kantata-ն:



ԿՈՐՈՒՄՅԱԼ ԴՐԱՆՏ

ՐԱՅՖՈՒ ՆՈՒԹԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՐՃԱՆԻ ՄԱՍԻՆ

Մաս 6

Սկզբը՝ «Լուսարար»-ի նախորդ համարներում


Գյուլիստան գյուղը, որի անունով կոչվում է Գյուլիստանի մահալը, գտնվում է կարծես մի խոր կաթսայի մեջ, որի չորս կողմից բարձրանում են անտառապատ լեռներ, որպիսի են Գոգթափա, Կարմիր-խաչ լեռը, Դագուն տուրմաչ և Մռավի շարունակությունը կազմող սարերը:



Գյուլիստան գյուղը

Գյուլիստան գյուղը հայաբնակ է, գտնվում է Ինջա կոչված գետակի մոտ: Ունի մի եկեղեցի, որ շատ հին է: Հին եկեղեցին ավերակ է, այժմ նույն գյուղացիները, որ նրա մեջ մկրտվել են, նրա սերունդը հազար անգամ համբուրել են, նրա մեջ պահում են իրանց ոչխարները: Չարմանակի մարդիկ են այդ գյուղացիները, նրանց մեջ կա և ծայրահեղ մոլեռանդություն և ծայրահեղ անկրոնություն, իսկ հաստատ ոչինչ չկա նրանց մեջ:

Գյուլիստանի եկեղեցուն գտնվում է մի հռչակավոր գրչագիր Ավետարան, որ պաշտվում է ամբողջ գավառի ժողովրդից: Սկսյալ Գանձակից և ամեն կողմերից բաշում է նա յուր մոտ ուխտավորների բազմություն, և նրան վերաբերում են բազմաթիվ հրաշագործություններ:



Գյուլիստանի եկեղեցին

Գյուլիստանում իջևանած լինելով գյուղի քահանայի տանը, ես խնդրեցի, որ ինձ տանե եկեղեցին և ցույց տա հիշյալ Ավետարանը: Նա մեծ ուրախությամբ կատարեց իմ խնդիրը, կարծելով, թե ես էլ ուխտավոր եմ: Մտանք եկեղեցին. նա իսկույն ծածկվեցավ շուրջառով և մի արկղի միջից դուրս հանեց մի ահագին կապոց և դրեց գրքակալի վրա: Այդ կապոցը ուրիշ ոչինչ չէր, եթե ոչ գույնզգույն թաշկինակներ մինը մյուսի վրա փաթաթած: Քահանան շարունակելով շարականը, մեկ-մեկ բաց էր անում թաշկինակները, որոնցից շատերը մետաքսից էին: Վերջապես, այդ բոլոր փաթեթների միջից հայտնվեցավ Ավետարանը: Ես մոտեցա և համբուրեցի նրա կազմը: Հետո կամեցա բաց անել, որ նայեմ: Քահանան արգելեց, կիսաքաղաքավարի կերպով հասկացնելով, որ ինքը միայն կարող էր նրան բաց անել, իսկ մի աշխարհական մարդու մատները չպիտի շոշափեին այդ սրբությունը: Ես չհակառակվեցա, ասելով, որ նա բաց անե, ես միայն հեռվից կնայեմ: Քահանան յուր ձեռքով, որ շատ էլ մաքուր չէր, բաց արեց Սուրբ գիրքը: Դա մի հասարակ գրչագիր Ավետարան էր, հաստ թղթի վրա գրված, ոչ Գետաշենի Ավետարանի գեղեցկությունն ունեւր և ոչ նրա գրչության արհեստը: Պատկերները շատ տգեղ էին, այնուամենայնիվ ժողովրդի մեջ ավելի համարում և համբավ ստացած էր, քան թե Գետաշենի Ավետարանը: Իմ որոնածը էր նրա հիշատակարանների մեջ մի պատմական տեղեկություն գտնել, այն ևս չգտա, որովհետև վերջին թերթերը քրքրված և պակաս էին:

Մյուս օրը վաղ առավոտյան ես ցանկացա տեսնել երկու

հնություններ, որ Գյուլիստանի գյուղից շատ հեռու չեն: Դրանցից մեկն էր ս. Ամենափրկչի անապատը, իսկ մյուսը՝ Գյուլիստանի բերդը: Իմ հյուրընկալ քահանան, թեև մոտ յոթանասուն տարեկան մարդ էր, յուր ձեռքով ձին բամբելով, մի ձի էլ ինձ համար պատրաստելով, հրացանը ձգեց ուսին, ծոխի մնան թռավ նրա վրա և իմ առջևը ընկնելով, սկսեց առաջնորդել ինձ:

Առավոտյան զով ժամանակն էր: Մենք գնում էինք ծորի միջով, որտեղից անցնում է արծաթի մնան սպիտակ Աղ-սու կոչված գետակը: Այդ գետակի վրա պետք է գտնեինք Ամենափրկչի անապատը: Նա Գյուլիստանից մի և կես ժամու չափ հեռավորություն ուներ, այդ պատճառով ես չէի շտապում, հետաքրքրվեցա իմ տերտերիցս մի քանի տեղեկություններ հավաքել:

- Տեր հայր, այս անտառում պտղատու ծառեր կա՞ն:

Նա գլուխը բացասական կերպով շարժում է, պատասխանելով՝ օրհնած, ոչինչ չկա:

Մի փոքր անցնում ենք, տեսնում են հոնի, գլեռի, կաղիմի, տանձենու և այլ պտղատու ծառեր:

-Տեր հայր, դու ասում էիր, որ պտղատու ծառեր չկան, այդ ի՞նչ է. տես, հոնի, գլեռի:

- Ո՞նց չկան, կան, հաճար կա: Հաճարն էլ ես նոր լսեցի:

- Հաճարը ի՞նչ են անում:

- Խոզերին են ուտացնում:

Այդ խոսակցության միջոցին տերտերը ինձ հեռվից ցույց տվեց Ամենափրկչի անապատը: Նա մանր առարկաների վրա, որպես էին պտուղները, ուշադրություն չէր դարձնում, խոշոր բաները ավելի շուտ էր տեսնում:

Ամենափրկչի անապատը, ինչպես ասացի, գտնվում էր Աղ-սու գետակի մոտ, ոչ այնքան հեռու Մռավ լեռից, մի անտառապատ ծորակի մեջ: Անապատի տաճարի շինվածքը կանգնած է չորս բոլորակ սյուների վրա, որ շինված են խամկուր քարից: Այդ տաճարը այժմ ամայի է. խաշնարած թուրքերը անասուններ են լցնում նրա մեջ. անասունների աղբը թանձրացած էր հատակի վրա: Տաճարից ոչ այնքան հեռու կա մի այլ շինվածք, ուր ապրում էր մի ժամանակ այնտեղի միաբանությունը: Դա էլ նույնպես անասնանոց է դարձել: Թե տաճարի և թե միաբանության բնակարանի բոլոր շինությունները դեռ մնացել են ամբողջ. կտուրների վրա բուսել են մացառներ և աճել են ահագին ծառեր: Անապատից մի քսան քայլ հեռավորության վրա գտնվում է մի փոքրիկ մատուռ, որ ուխտատեղի է. այստեղ դեռ թուրքերի անասունները մուտք չեն գործել, որովհետև դուռ ունի: Չարմանակի անհոգություն, թե ժողովրդի և թե մեր հոգևոր կառավարության կողմից. ահագին ծախքեր անելով, նախնիքը թողել են այդ սրբավայրերը: Այժմ նրանց որդիքը գոնե դռները քարով ամուր կպցնեին, բաց չթողնեին, որ թուրքերի անասնանոց դառնար: Անապատի ջրաղացի ավերակները դեռ մնում են:



Նապատ վանքը

Այդ անապատի գավթուն թաղված կան զանազան անձանց գերեզմաններ, որոնց թվում է Աբրահամ յուզբաշու գերեզմանը (որ գնաց Պետրոս Մեծի մոտ):

Ես շտապում էի տեսնել Գյուլիստանի բերդը, որի մեջ ամրացած, հայոց մելիքները մինչև վերջին ժամանակները սարսափեցնում էին մահմեդականներին: Ամենափրկչի անապատից մի մեղ ճանապարհ անտառների միջով ուղիղ տանում է դեպի բերդը: Նա շատ հեռու չէր, ընդամենը պետք է գնալ մի երեք վերստ, որը հեռվից տեսա, իմ սիրտը սկսեց բաբախել: Ես տեսնում էի այն բերդերից մեկը, որի մեջ իմ վեպի հերոսները գործել էին:

Այդ բերդի տեղը բնության հրաշալիքներից մեկն է: Մի ահագին սեպացած քարածայռ բարձրանում է խոր ծորի միջից և այդ քարածայռի գլխին շինված է բերդը: Որպես խրամատ ծառայում է նրան խոր անդունդը, որի միջով հոսող



Գյուլիստանի բերդը

գետակը պտույտներ է գործում և այդ քարածայռի երեք կողմից ոլորվելով, նրան թերակղզու ձև է տալիս: Մի կողմից միայն բարձր քարածայռի ստորոտը միանում է ցամաքի հետ:

Մռավ լեռը այստեղից ընդամենը մի երկու վերստ ճանապարհ է, բայց ես նրա գագաթը բարձրանալու բախտ չունեցա: Չնայելով իմ բոլոր թախանձանքին, ինձ առաջնորդող քահանան չկամեցավ ինձ հետ գալ, անդադար կրկնելով, թե մեզ կսպանեն: Եվ ոչ մի գյուլիստանցի չցանկացավ ինձ հետ ուղեկցել, միևնույնը կրկնելով: Բանից դուրս եկավ, որ այդ բոլոր երկյուղը խաշնարած թուրքերիցն է, որ այդ լեռան ստորոտներում ցրված են: Չարմանակի բան է, Աֆրիկայում ճանապարհորդը ավելի ապահով է իրան զգում, քան թե այստեղ:

Բայց որքան ես տեղեկացա ականատեսներից, թեև Մռավը հեռվից խիստ սրածայռ է երևում, բայց նրա գագաթը բոլորովին տափարակ է, և բավական տարածություն ունի: Նրա գագաթի վրա կան երկու գերեզմաններ, որ հայոց ուխտատեղի է: Այդ գերեզմանները պատկանում են ճգնավորների, որոնք բնակվում էին այդ լեռան գագաթի վրա: Մինչև այսօր ցույց են տալիս նրանց ճգնարանները, որոնք ուրիշ բան չեն, եթե ոչ երեք ահագին քարեր միմյանց մոտ դրած և մի քար ևս դրած նրանց վրա որպես ծածկոց: Միջում մի մարդ միայն կարող է բնակվիլ: Այդ ահագին քարերի այսպես միմյանց վրա դրվիլը միայն հսկաների գործ կարող է համարվել:



Մռավ լեռը Գյուլիստանից

Գյուլիստանից դուրս գալով, բարձրացանք Թոռուտ կոչված անտառապատ լեռների վրա: Այդ լեռները արժանի են իրանց անվանը, որովհետև, օրի մեջ, կարծես մի տեսակ մուրթ անձրև աննկատելի կերպով թորում է: Երկու ժամից հետո հասանք Թոռուտ գյուղը, որ կոչվում է նաև Յուղակեր: Այստեղ բնակվում են ոչ ավելի քան 15 հայ ընտանիք, որ գաղթական են Շուշվա կողմերից: Այդ գյուղը առաջ հայոց բազմամարդ գյուղերից մեկն է եղել, հետո ավերակ է դարձել, այժմ նորից այնտեղ բնակություն են հաստատել:

Հիշյալ գյուղում փոքր-ինչ հանգստանալով, երբ նկատեցի տեղային անպիտան տանուտերը ձին ուշացնում է, ստիպվեցա այդ գյուղի մոտ իջևանած քոլանիներից մի ձի վարձել և շարունակել իմ ճանապարհը:

Թոռուտից դուրս գալով դարձյալ անտառների միջով շարունակելով մեր ճանապարհը, մեկ ժամ առաջ գնալուց հետո, իմ առաջնորդ քոլանին դարձյալ ընդհատեց տիրող լռությունը, ասելով. «Հիմա կտեսնենք այն տունը, որ ասում էինք»:

Իմ սիրտը թնդաց ուրախությունից, ես պիտի տեսնեի Գյուլիստանի հին մելիքների պալատները: Գնալով ավելի հեռու, մեջքս դարձրաքանակեցի և տեսա, որ այն տեսնելու համար անհրաժեշտ էր շտապել: Երբ բոլորովին մոտեցանք, երևաց սպիտակ պալատը:

Պալատը շինված է ամբողջապես սպիտակ քարերից: Նա բաժանվում է երկու շինվածքների, մինը մյուսի հանդեպ, մեջտեղից ճանապարհ է անցնում: Հռոնկի բլուրի ստորոտում գտնվում է բուն պալատը: Ամբողջությունը քառակուսի ձև ունի. շրջապատի չորս անկյունները ամրացրած են չորս աշտարակներով: Գլխավոր դռնից ներս մտնելով բակը, դեպի աջ կողմը բոլորովին ողջ կանգնած են մի կարգ ընդարձակ սենյակներ. նրանց թիվը ութն է: Սենյակների առաստաղը

ՎԱՍՆ ՎԱՅՐԵՆՅԱՏ

ՎԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԴԱՍ՝ ՎԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՎԱՆՋՈՎ

Ասկերանի Էդմոն Բարսեղյանի անվան միջ- նակարգ դպրոցում նշվեց հայ ժողովրդի ազա- տագրական պայքարի ամենափառալուր եղե- րից մեկի՝ ֆիդայական (հայդուկային) շարժ- ման դարավոր պատմությանն ու Արցախի հե- րոս Շահեն Մեղրյանի ծննդյան 70-ամյա հո- բելյանին նվիրված միջոցառում, որի սկիզբն ազդարարվեց Արցախի Հանրապետության օրհներգով:

Միջոցառումը կազմակերպել է դպրոցի պատմության ուսուցչուհի Լուսինե Խաչատր- յանը՝ 8-րդ Ա դասարանի աշակերտ- ների մասնակցությամբ: Ուշագրավ էր, որ հայոց պատմության հերոսա- կան էջերը հանդիսականներին ներ- կայացնելու նվիրված միջոցառմանը ներգրավված էին տարբեր տարի- քի դպրոցականներ, ինչն ավելի ամ- բողջական էր դարձնում օրվա խոր- հուրդը: Չընկճվել ու չվիստվել եր- բեք, այլ պայքարելով պայքարել, մինչև բաղձալի օրվան հասնելը... Իսկ որ հայ ժողովրդի համար կրկին գարուններ կբացվեն, կասկածից վեր է:

մեռնելը»: Նրանք իրենց ամբողջովին նվիրա- բերեցին Հայրենիքին՝ հրաժարվելով աշխար- հի վայելքներից:

Դպրոցականները փոքրիկ բեմակամացու- մով ներկայացրին **ֆիդայի** պատվավոր կոչ- ման արժանի դառնալուն նվիրված երդում- ծիսակարգը, թե ինչպիսին պետք է լինի և իրեն պահի իսկական ֆիդային. կարգապահ, գաղտնապահ, քաջ ու խիզախ, այսինքն՝ օրի- նակելի բոլոր առումներով: Հայրուկի երդումն այնքան արդիական էր, որ Արցախյան առա-

ժամանակն է երկնում իր հերոսներին... Շահունյանի արժիվը հունվարի 2-ին կդառ- նար 70 տարեկան:

Ծնվել և հասակ է առել Շահունյանի շրջա- նի Գյուլիստան գյուղում: Գերագնացությամբ ավարտելով միջնակարգը՝ 1969-ին ընդունվել է ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետը: Շա- հեն Մեղրյանի մարտական ուղին սկսվել է 1988-ին: Նա առաջիններից մեկն էր, որը կազ- մակերպեց կամավորական զինված ջոկատ- ներ: Հայրենիքը վտանգի մեջ էր, ծննդավայր Շահունյանի վիճակը՝ օրհասական: 1991-ի աղետալի «Կոլոց» օպերա- ցիայի հետևանքով ընկան Գե- տաշենն ու Մարտունաշենը: Իսկ նույն տարվա հունիսին թշնամուն հաջողվեց գրավել շրջանի երեք գյուղեր՝ Էրեթը, Բուզլուխն ու Մա- նաշիղը: Շահեն Մեղրյանի կազմա- կերպած հակահարձակողական ռազմագործողության արդյունքում հայ մարտիկներին հաջողվեց ազա- տագրել նշված գյուղերը: Արցախյան հակամարտության զինված պայքա- րում առաջին անգամ մեր ազատա- մարտիկներին հաջողվեց իրենց ու-

րի չբացահայտված դեպքերի շարքն է դաս- վում: Ողբերգական դեպքը տեղի է ունեցել 1993-ի ապրիլի 17-ին, երբ Գյուլիստանի երկն- քում խոցվեց այն ուղղաթիռը, որով Գյուլիս- տանի արժիվն իր զինակիցների հետ ցանկա- նում էր ուղևորվել Երևան:

2014 թվականին Շահեն Մեղրյանին շնորհ- վեց «Արցախի հերոս» բարձրագույն կոչումը: Միջոցառումն ուղեկցվում էր աշակերտնե- րի հայրենասիրական երգերի, ազգային պա- րերի գեղեցիկ կատարմամբ ու տրամաբանա- կան ավարտին հասավ «Դե գարկեք, գար- կեք» երգի խրոխտ հնչյունների ներքո:

Վերջում Լուսինե Խաչատրյանը միջոցառ- ման կայացման համար իր երախտագիտու- թյունը հայտնեց բոլոր աջակիցներին: Նա կոչ արեց երեք չկոտրվել, այլ անցյալի սխալնե- րից դասեր քաղելով առաջ շարժվել դեպի նոր հաղթանակներ:

Մեկ միջոցառման շրջանակում ներկայաց- նել հայ ֆիդայիներին, Հայ Դատի պաշտպան- ներին, նվիրյալներին ու վրիժառուներին, ան- շուշտ, դժվար է, սակայն դպրոցականներին հաջողվեց ներկայացնել նրանց հերոսական ու ազգանվեր կերպարները: Վստահաբար կա- րող ենք փաստել, որ մեր ժողովրդի փրկությու- նը համերաշխ գործունեության մեջ է: Քանզի, ինչպես անցյալն է փաստում, այնտեղ, որտեղ ժողովուրդը կազմակերպված էր և զինված, հաղթանակներ էին կերտվում: Թուրք ուժով է անգնի դեմ՝ ծեր ու մանկան դեմ: Իսկ մարտի դաշտում մեկ հայը տասը թուրք արժե...

Հանուն Հայրենիքի կյանքը գիտակցաբար գոհած երիտասարդների սխրագործություն- ներն ընդմիջտ կմնան հայ ժողովրդի պատմու- թյան հերոսական էջերում՝ դառնալով նվիրու- մի անկրկնելի օրինակ, խորհրդանիշ ու փա- րոս բոլորիս համար:

Անահիտ ԳԵՏՐՈՍՅԱՆ



ջին պատերազմի ժամանակ «Արաբ», «Վերոգ Չաուշ», «Եղնիկներ» աչքի ընկած ջո- կատների մարտիկները Հայրենիքի պաշտպա- նությանը զինվորագրվում էին երդման այդ նույն կարգով:

Գարեգին Նժդեհ, Աղբյուր Սերոբ, Անդրանիկ Օզանյան, Արաբ, Վերոգ Չաուշ, Նիկոլ Դու- ման, Հրայր Դժոխք, Խանասորցի Վարդան և բազմաթիվ նվիրական անուններ, որոնց ան- ցած հերոսական ու փառավոր ուղին մշտա- պես օրինակելի է եղել ու հասել մեր օրերը: Նրանց արդար գործի շարունակողներից եղան Արցախյան առաջին ազատամարտի հե- րոս նվիրյալներ Թաթուլ Կրպեյանը, Մովսես Գորգիսյանը, Շահեն Մեղրյանը...


ժերով ազատագրել գրավյալ տարածքները:

1992-ին Շահունյանի բռնի տեղահանումից հետո Մեղրյանն իր կամավորականներով հետ քաշվեց Հաթերք ու սկսեց պարտիզանական պայքար իրականացնել Արցախի հյուսիսում: 1993 թվականին Շահեն Մեղրյանը նշանակ- վեց նորաստեղծ զորամասի հրամանատար:

Արցախի հերոսն իր մարտիկներին առաջ- նորդում էր մարդկային ամենավեհ գաղափար- ներով ու սկզբունքներով՝ այս հողի համար արժե կռվել ու մեռնել...

Շ. Մեղրյանի զոհվելու փաստը նորանկախ Հայաստանի Հանրապետության քաղաքա- կան, ռազմական և հասարակական գործիչնե-

կամարակապ է և գմբեթաձև: Գմբեթի զագաթից բոլորածև եր- դիկ է բացված, որտեղից լույս է թափվում: Սենյակները ուրիշ լուսամուտներ չունին: Դրանց ձևը սյունեցու տան կատարե- լագործված ձևն է: Այդ մի կարգ սենյակների առջև կա եր- կայն պատշգամբ, որ ծածկված է կամարներով, որոնք ամրա-



Մելիք Բեգլարյանների պալատը: Գծ. Ա.Ղուլյանի

նում են ութ հաստ սյուների վրա: Սյուները քառակուսի են, շինված քարից, որպես ամբողջ շինվածքը:

Պալատի այդ կարգի սենյակները հարմարեցրած են բնա- կիչների բոլոր պահանջներին, բոլորի մեջ կան բուխարիներ. կա առանձին խոհանոց, նրա մոտ ստորերկրյա մառան, գա- նազան պահեստի տեղեր և այլն: Սենյակների դռները եկեղե- ցու դռների ձև ունեն, քարե կշտանոցներով: Այդ կարգի սե- նյակները բոլորը մի հարկանի են և պահպանել են իրանց ամ- բողջությունը: Քարն ու կիրը, այդ է նրանց բաղադրությունը. փայտի մի կտոր անգամ չկա նրանց շինվածքի մեջ:

Այդ մի կարգ սենյակների հանդեպ կառուցված է պալատի մյուս մասը, որ բաժանվում է առաջինից երկայնաձև, քառա- կուսի բակով: Դա բաղկանում է մի ընդարձակ սրահից, որի երեսը բաց է և որը ծառայելիս է եղել ամառվա բնակության համար: Ըստ մեծի մասին այս տեսակ սրահներ ունենում են իշխանները, որոնք պարսից սովորության համեմատ, այնտեղ նստելով, դատավորություն են անում: Ժողովուրդը թակում, բաց օդի մեջ կանգնած է լինում, իշխանը սրահում նստած լսում է նրանց խոսքը և վճիռներ է տալիս: Սրահի երկու կող- մերում կան գեղեցիկ սենյակներ, որոնք երեքհարկանի են



Մելիք Բեգլարյանների պալատի ավերակները Թալիշում

եղել: Վերին հարկը քանդված է:

Այդ պալատի հանդեպ, ճանապարհի մյուս կողմում, կա մի այլ առանձին շինվածք, որը յուր ընդարձակությամբ ավելի մեծ է, քան առաջինը: Որպես երևում է դա ծառայելիս է եղել հիշյալ պալատում բնակվող իշխանի ծառաների, հյուրերի և պահապանների բնակության համար: Այստեղ կա փտռա- տուն, ստորերկրյա ներքնատներ, որոնք բանտի համար են եղել և այլ գանազան ծածկոցներ: Այդ շինվածքի ամբողջու- թյունը նույնպես քառակուսի ձև ունի. անկյունները ամրացած են ահագին աշտարակներով: Բայց մի քանի շինվածքներ միայն այստեղ պահպանել են իրանց ամբողջությունը. մնա- ցածը քայքայված է, անտառը մասամբ պատել է, սենյակների միջից ծառեր են բուսել:

Այդ մասնում մի դահլիճի դռան կամարի վրա կարդացվում է հետևյալ արձանագրությունը. «Հիշատակ է Օհան բարուն (բարուն կամ պարոն բառը Սյունյաց և Աղվանից հիշատակարանների մեջ գործ է ածվում նույն մտքով, որպես Կրիկեցվոց ժամանակ, այսինքն՝ իշխան) տերին Մելիք Թամ- րազ թ. ՌՃՅԶ (1176):

Հիշյալ երկու շինվածքներից փոքր-ինչ հեռու, մի աղբյու- րի մոտ, գտնվում են բաղանիքները, որոնց առաստաղի գմբեթները քանդված են, իսկ մնացածը ողջ է:

Առհասարակ հնության այդ գեղեցիկ հիշատակարաննե- րը, որ կառուցված են քարով և կրով միայն, ոչ այնքան տրոր- վում են ժամանակից, որքան ժողովրդի բարբարոս ձեռքերից:

Թալիշեցի հայերը դրանց մոտ ունին կիր այրելու քուրաներ. քանդում են պալատների քարերը և քուրաների մեջ այրելով, կիր են պատրաստում: Թեև շրջակա լեռները կազմված են կրային քարերից, բայց ծուլ գյուղացու համար ավելի հեշտ է քանդել պալատի արդեն պատրաստի քարերը:

Տեղացիք այդ պալատները ընծայում են մելիք Թամրա- զին և նրա եղբայր Աբով յուզբաշուն: Բայց այդ շինվածքների գոյությունը պետք է ավելի հին համարել, քան հիշյալ երկու իշխանների ժամանակները: Դրանք, անտարակույս, Աղվա- նից վաղեմի իշխանների կամ թագավորների ամառանոցներ են:

Բարտավ քաղաքի Աղվանից իշխանները սովորություն ու- նեին ամառը այդ կողմերի անտառապատ լեռների վրա անց- կացնել, որովհետև ամառվա տոթը Բարտավի մեջ անտանելի է լինում:

Հիշյալ պալատներից բարձրանում է դեպի Հոռեկ գյուղը, որ գտնվում է անտառապատ սարի լանջքի վրա: Հոռեկը հին Թալիշն է, որ հիմնեց ուսիպացոց աշխարհից գաղթական Թա- ռիշ իշխանը, որ Գյուլիստանի կամ Թարիշի (Թալիշի) մահա- լին տիրող իշխանների մահապապն է:

Այդ գյուղի մեջ այժմ բնակություն չկա, շինվածքները բոլո- րը կորած են անտառի տակ: Որովհետև, երբ բնակիչները գաղթեցին Վրաստան, այդ գյուղը ավերակ դարձավ, այնտե- ղից վերադառնալով 4 վերստ հեռավորության վրա հիմնեցին նոր Թարիշ կամ Թալիշ գյուղը:

Հոռեկում կամ հին Թալիշում այժմ չեն է մնացել միայն մի եկեղեցի, որ ուխտատեղի է: Դա շինված է ՉԻԸ (728) թվին, 602 տարվա հնություն ունի: Եկեղեցին բաղկացած է երկու մաս- նից՝ գավթից և տաճարից: Եկեղեցու շուրջը, անտառի մեջ, պատած մացառներով, ցրված են Թալիշի մահալի վաղեմի տիրապետողների մամռապատ շիրիմները: Ինձ հաջողվեց մացառների միջին գտնել մի քանի մելիքների, յուզբաշինների և բեկերի գերեզմաններ, որոնք մեծ դեր են խաղացել այդ երկ- րի պատմության մեջ: Թալիշի մելիքների այժմյան ներկայա- ցուցիչների՝ Մելիք Բեգլարովների տոհմային գերեզմանա- տունը նույնպես այստեղ է: Հոռեկի եկեղեցին ուխտատեղի է, գտնվում է մի հիանալի անտառապատ սարի լանջքի վրա, որի բարձրությունից երևում է Կուր գետը, Թարթար գետը և Ջուանշիրի մահալի հարթ տափարակները:



ՄԵՐ ԲԱՂՅՈՒՄԸ

ԲԱՐՔԱՌԸ ՈՐՊԵՍ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԼԵՉՈՒ

Յուրաքանչյուր լեզու ունի իր բարբառը: Չայոց լեզուն ունի 50-ից ավելի բարբառներ, որոնց մի մասը մինչ օրս գործածվում է, որոշակի բարբառներով խոսող տարածքները վերջին ժամանակներում նկատելիորեն նվազել են, իսկ բազմաթիվ բարբառախոս տարածքներ՝ վերացել: 2020 թվականի Արցախյան վերջին պատերազմի ժամանակ Ադրբեջանի տիրապետության տակ անցած որոշ տարածքներում գործածվող ենթաբարբառներն ու խոսվածքներն այսօր կանգնած են ծուլման ու վերացման վտանգի առջև: Այդ իսկ պատճառով այսօր մեր պարտքն ու խնդիրն է մշտապես գրի առնել և տարածել հայերենի բարբառներով հնչած յուրաքանչյուր բառ, որպեսզի վերջնականապես չկորցնենք մեր լեզվին համ ու հոտ հաղորդող մեր բարբառները:

Բարբառները միշտ էլ հանդիսացել են գրականության և արվեստի լեզու: Չայ գրողները միջավայրի երանգավորման, կերպարների խոսքի անհատականացման նպատակով իրենց երկերում օգտագործել են բարբառային բառեր ու արտահայտություններ:

Որքան էլ հարուստ լինի գրական հայերենի բառապաշարը, բարբառներում դեռևս գոյություն ունեն բազմաթիվ բառեր, որոնց ճշգրիտ համարժեքները ոչ գրական լեզվում, ոչ էլ ժողովրդականացված չկան:

Իրենց երկերում բարբառներից օգտվել են գրողներ Պերճ Պռոշյանը, Վրթանես Փափագյանը, Հովհ. Թումանյանը, Ալ. Բակունցը, Դ. Դեմիրճյանը և այլք, իսկ որոշ գրողներ ստեղծագործել են բարբառներով, օրինակ՝ Սայաթ-Նովան և Գ. Սուևոյանը գրել են թիֆլիսահայ, Ռ. Պատկանյանը՝ Նոր Նախիջևանի բարբառներով:

Այս հոդվածում փորձելու են ներկայացնել Ղարաբաղի բարբառը որպես գրականության և արվեստի լեզու:

Ղարաբաղի բարբառն իր ուրույն տեղն ու դերն ունի հայերենի բարբառների շարքում: Ղարաբաղի բարբառով ստեղծվել ու ստեղծվում են գրական տարբեր ժանրերի ստեղծագործություններ, բայց ավելի շատ Ղարաբաղի բարբառին հանդիպում ենք ժողովրդախոս-

սակցական լեզվով ստեղծված ստեղծագործություններում, առած-ասացվածքներում, օրինանքներում ու անեծքներում, հանելուկներում և հեքիաթներում, երգերում ու հումորային մանրապատումներում:

Ինչքան ճիշտ է ու անհամեմատելի Ղարաբաղի բարբառը, նույնքան էլ ճարտար է արցախցու լեզուն, որի շնորհիվ գովերգվել է գյուղացու արդար աշխատանքը, փառաբանվել մայր հողից ստացած բերքն ու բարիքը, «խեղճանը» պահող «եզնը»:

Արցախյան առած-ասացվածքների մեջ արտահայտված են բազմաթիվ ու բազմաբնույթ երևույթներ: Դարեր շարունակ արցախահայությունը կենաց ու մահվան պայքար է մղել օտար զավթիչների դեմ՝ հաճախ ստիպված լինելով հարկադրական տեղաշարժերի: Դրա վառ արտահայտությունն է «Ալին քըլեցավ, Վալին յեկավ» առածը, որի ուղղակի իմաստն արտահայտում է օտար նվաճողների իրար փոխարինելը: Բազում դարերի կենսափորձով արցախցին հանգել է մի հետևության. թշնամու բարեկամությունը կեղծ է ու ցանկացած պահի կարող է վնասել, պետք է զգույշ լինել. «Թօրքեն նըրըտ հընգըրթունը ըրա՛ մը հակը ծըրքատ վեր մի՛ տինիլ»:

Առած-ասացվածքները հստակորեն ներկայացնում են արցախցու կյանքի պատկերը, հասարակական կենցաղը, սովորություններն ու հայացքները: Իմաստուն ու խորն են արցախցու հայացքները աշխատանքի ու հասարակության, ժողովրդի մասին: Պետք է գնահատել աշխատանքը. «Ըշխըղանքեն կյինը գյիդօղը մարթինըն էլ կգյիղա»:

Արցախի բարբառով ստեղծվել են նաև օրինանքներ ու անեծքներ, որոնք արտահայտել են խոսողի ցանկությունը խոսակցին՝ լավ թե վատ, բարի թե չար: Ինչպես օրինակ՝ «Աղու օտիս», «Ազկավ-ծուպավ ճինջվիթ» և «Պյարանընը քաղցըր կենա», «Օխտը հարթնավ սուփրա-սեղան նըստես»:

Արցախյան բանահյուսության տարրերից են նաև հանելուկները, որոնք ներկայացնում են ժողովրդի զարգացման ընթացքը, նրա կաթաճակը, աշխարհայացքը, հոգեբանական

առանձնահատկությունները, ինչպես օրինակ՝ «Կըլլօխը փաղ, տակը՝ քար, օք վըննան էրկու սար» (կամն և եզներ), «Չենգ ախպեր՝ մինը քարա կըրում, մեկայը պատ ըն շարում» (գուլպայի ճաղեր):

Ըստ Ա. Սարգսյանի՝ արցախյան բանահայտության բանահյուսության ժանր պետք է համարել նաև գյուղերի մականունները: Ինչպես օրինակ՝ «Պըլ հըրըրքեցեք, քօռ/մինը կանն ուրթունակյունըրեցեք, գօրունը տըզզան կա՛ վըրըրքեցեք, քարուն կօրած ըռըծուրեցեք, հացը ցեց տինօղ, քըմակեն կյօղը կեճօղ ըռըծուրեցեք»:

Ղարաբաղի բարբառով ստեղծվել, հավաքագրվել ու գրի են առնվել մի շարք հումորային մանրապատումներ, որոնք ստեղծվել են միամիտ ու աշխատավոր արցախցու առօրյայում տեղի ունեցած զվարճալի իրավիճակներից:

\*\*\*

«Ըմըմըվա մին տաք օր տավարը կիտում ըն, քինամ մի տառնում դուրուղը: Նախագան Արթօժն ծեն ա տան ասում.

- Արթօժ, տավարը քու ըռաչատ ըն քինացալ դուրուղը, պի խօտեն ջարման տօ:

Արթօժն ասում ա.

- Տավարը յես չում տարալ մի յըրալ, տան չում, տավարը կիտալ ըն, քինացալ մի տառալ: Նախագան Արթօժն սուղըն ա տամ: Սուղյան հըրըցընում ա.

- Արթօժ, իտ ջարման տան չը՞ս:

- Պարօ՞ն դատավօր, տավարը յես չում մի յըրալ դուրուղը, կիտալ ըն, քինացալ մի տառալ:

- Կիտը հինջ ա՞:

- Պարօն դատավօր, կիտը մին կուճուր պան ա, վար մի մընէ քու քամակըտ, մենակ դուրուղը չըս է քինման, ընդդան էլ տեն ըս քինական: (Վաղուհաս)

\*\*\*

«Լավօն, ուրանց շինացէ երկու հօքի տիրած կաթինկունը, գըրուզավօյ մըշինավ քինյանա քաղաք: Բուրդան յեշում ա տեսնում միլիցեքը հըղեցը վըննը կացած, յետ ա տառնում, թա.

- Ծըզանա մինուըրտ կըլօխը քըռըցընէ, թա չէ, վար տեսնան՝ կաթինկունը իրեք հօքի յըն, պըրավաս ինք յըն ուննան:

Ախրը, վար տեսնում ա՛ տահանցան վեշ-մինը կլօխը քըռըցընում չի, ճարը կըտրած՝ ինքըն ա կըռանում, համ էլ թա.

- Շան տըղեք, էլ հընցալ ա, վար ասեն՝ էտ շօփերը հուր ա՞, կասեք՝ փուշմանալ ա, յետ տառալ»: (Առաջամոր)

Ղարաբաղի բարբառը հանդիսացել է նաև արվեստի լեզու: Արցախը հայկական ավանդական հորովելի նշանավոր կենտրոններից է: Այդ ժանրի երգեր ձայնագրվել են ինչպես 1890-ական թվականներից սկսած, այնպես էլ նոր ժամանակներում: Բանաստեղծ-երգահան Գ. Գաբրիելյանի «Ղարաբաղի հորովելը» երգը, «Խնեցուն երգը», «Կալին երգը», «Ըրկանքեն երգը», «Չըրսընքեն կնանքը» արտացոլում են արցախյան կյանքի ու կենցաղի բազմաբնույթ կողմերը: Հանրաճանաչ է Արամ Քոչարյանի «Նախշուն աքիր» սոցիալական կատակերգը: Կան նաև ժողովրդի կողմից ստեղծված կատակերգեր և, օրինակ՝ «Շախշախի ասէ, պարուն կյան, Թօխին կօրալ ա, շօռուն կյան» կամ՝ «Չայ բարիբա, բարիբա, հավեն բուղը ժարիտ ա, կատուն յեկու պըռըշկեց, այան յեկու տըմըրզեց»:

Սրանցով չեն սպառվում Ղարաբաղի բարբառով ստեղծված գրական և բանահյուսական ստեղծագործություններն ու դրանց ժանրերը, այդ ժանրերի ստեղծագործություններում արծարծված թեմաներն ու հանգամանքները: Իրականում դրանք բազմաթիվ են ու բազմազան: Սակայն ամենակուլ ժամանակն իր ազդեցությունն է ունենում բարբառների և դրանցով ստեղծված գոհարների վրա: Այսօր առավել քան երբևէ պետք է հոգ տանենք, որ մեր բարբառը չծուլվի գրական լեզվին, չկորցնի իր ինքնատիպությունը, համն ու հոտը:

**Երջանիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**  
**Առաջամորի Ա. Պողոսյանի անվան**  
**միջն. դպրոցի ՄՎԱԳՏՏ**

Հուշ-ցերեկույթ

Հունվարի 29-ին մարդաշատ էր Խնուշինակի միջնակարգ դպրոցը: Մարդիկ եկել էին մասնակցելու Արցախյան 44-օրյա պատերազմի նահատակների հիշատակին կազմակերպված հուշ-ցերեկույթին:

Բացման խոսքով հանդես եկավ դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ Գայանե Արիբաբայանը, որը նաև այդ միջոցառման կազմակերպիչն էր:

Դպրոցի տնօրեն Նարինե Հայրապետյանը հատուկ շնորհակալություն հայտնեց հովանավոր Միշել Տանկրեզին՝ նահատակների հուշատախտակի, փառքի սրահի հավուր պատշաճի կահավորման, դպրոցական գույքի ձեռք բերման համար:

Երեխաներն իրենց ելույթներով հիացրին ներկայներից:

Հուզված էին բոլորը, որդեկորույս մայրերը չէին կարողանում զսպել իրենց արցունքները:

Զոհված ազատամարտիկ Էդգարի քույրը՝ Տաթևը, արտասովոր էր երգում, անընդհատ նայում որդեկորույս մոր աչքերին:

Շաքարյանի որդուն՝ Փոքրիկ Լիան իր հեզաճկուն պարով նոր շունչ ու ոգի տվեց միջոցառմանը:

Գրիգորի վառ հիշատակին: Հուշատախտակից մեզ էին նայում նաև առաջին ազատամարտի հերոսները՝ Սուրիկը, Արթուրը, Գեորգին...

զինվորը երբեք չի պարտվել, ծնկի չի եկել. այդ են հավաստում նաև մեր գոհված սաները՝ մի-մի արծիվներ:

Փառք նրանց անմար հիշատակին:

Միջոցառման վերջում հանդես եկավ տողերիս հեղինակը. «Մեզ համար իբր բացվել է խաղաղության դարաշրջան: Բայց ի՞նչ խաղաղության դարաշրջան, երբ սահմանին անեն օր հայ զինվոր է սպանվում, հայ առևանգվում, խախտվում սահմանամերձ շրջանի բնակչի անվտանգությունը:

Մենք պետք է հզորացնենք մեր բանակը, ապավինենք մեր զինվորի հզոր բազկի ուժին. այսքան արյուն չի հեղվել մեր սուրբ հողում, որ մենք նորից հայտնվենք արյունաբոլոր թուրքի բռնապետության ներքո»:

**Կարինե ՍԱՐԳՍՅԱՆ**  
**Խնուշինակի միջնակարգ**  
**դպրոցի Նախկին փոխտնօրեն**



Ինչքան հուզիչ էր այն պահը, երբ բանակ զորակոչված էրիկը իր ձեռքով Արցախի դրոշմ էր հանձնում փոքրիկ Գոռին՝ նենգ թշնամու կողմից նահատակված Գուրգեն

Հուզիչ էր նաև մայրերնի ուսուցչուհի Իրա Հարությունյանի խոսքը՝ նվիրված Արցախյան վերջին պատերազմում զոհված սաների՝ Գուրգենի, Հայասերի, Էդգարի,

նահզորն էր մեր տարածաշրջանում, մեր անվտանգության գլխավոր երաշխավորը:

Ջարդվել է այդ բանակի ողնաշարը, բայց մեր բանակը, մեր

ԷՔՍՏՈՆ

ՀԱՍՏԱՏՎԵԼ ԵՆ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ԶԵՎՈՎ (ԷՔՍՏՈՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՉՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅՎԱԶՄԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ԱՅ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022թ. հունվարի 17-ի N7/Մ հրամանով հաստատվել են 2022թ. 1-ին քննաշրջանի՝ դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգը և ժամանակացույցը՝ հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի շահագրգռության կրթության և գիտության նախարարի՝ 23.10.2012 թվականի N181-Ն հրամանով հաստատված՝ «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգի» 20-րդ կետի և 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:

Համաձայն հրամանի՝ 2022 թվականի բոլոր քննաշրջանների համար դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննություններ անցկացնելու իրավունքը վերապահվել է «Ստեփանակերտի Ա. Սախարովի անվան հ.8 միջնակարգ հոսքային դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը: Քննությունները կանցկացվեն 2022 թվականի փետրվարի 15-ից մինչև մարտի 15-ը ներառյալ:

Հավելված 1  
Արցախի Հանրապետության  
կրթության, գիտության, մշակույթի և  
սպորտի նախարարի  
2022 թ. N 7/Մ հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ  
2022 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՍԵԿՈՒԹՅԱՆ ԶԵՎՈՎ (ԷՔՍՏՈՆ) ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՉՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՅՎԱԶՄԱՆ (ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ ԶԵՆԱՐԳՆԱՆ)

1. Հիմնական կրթության վկայական ստանալու համար դրսեկները 2022 թվականի 1-ին՝ փետրվար-մարտ քննաշրջանի ընթացքում «Համաշխարհային պատմություն», «Հայաստանի աշխարհագրություն», «Աշխարհագրություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» և «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն կամ ռուսերեն) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Արցախի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը (այսուհետ՝ ԳԹԿ)՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն» և «Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են բանավոր: «Ֆիզիկա» առարկայի քննության անցկացման եղանակը նորմատիվների հանձնումն է: Քննական հարցատոմսերը կազմում են էքստեռն քննություններ ընդունող դպրոցի (այսուհետ՝ Դպրոց) համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

2. Միջնակարգ կրթության ատեստատ ստանալու համար դրսեկները 2021 թվականի 3-րդ քննաշրջանի ընթացքում «Համաշխարհային պատմություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, այլ լեզուներ՝ սովորողի ընտրությամբ), «Ռուսաց լեզու» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են գրավոր:

1) Քննական թեստերը կազմում է Արցախի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնը՝ առնվազն 4 թեստ յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 20 բալային համակարգով:

2) «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Ինֆորմատիկա», «ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն», «Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար) առարկաների քննությունները հանձնում են բանավոր: «Ֆիզիկա» առարկայի ստուգաթիվ անցկացվում է նորմատիվների հանձնմամբ: Քննական հարցատոմսերը կազմում են Դպրոցի համապատասխան մեթոդական միավորումները՝ առնվազն 10 հարցատոմս յուրաքանչյուր առարկայից՝ գնահատման 10 բալային համակարգով:

3. Դրսեկության ձևով (ավարտական՝ ուսումնական պլաններով նախատեսված առարկաներից) քննությունները դրսեկները հանձնում են՝ համաձայն հավելված 2-ի:

4. Հարցատոմսերով կազմակերպվող բանավոր քննությունների անցկացման ժամանակ յուրաքանչյուր դրսեկ վիճակահանությամբ ստանում է առանձին առաջադրանք (հարցատոմս): Դրսեկը բանավոր քննություններին նախապատրաստվելիս կարող է կատարել գրավոր համառոտագրում:

Դրսեկության ձևով քննությունների արձանագրությունները և գրավոր աշխատանքները պահպանվում են դպրոցում, ավարտական փաստաթղթերը ստանալուց հետո՝ մեկ տարի:

5. Հիմնական կրթության վկայականում և միջնակարգ կրթության ատեստատում ավարտական և պետական ավարտական քննական առարկաները գնահատվում են 20 բալային համակարգով, իսկ տարեկան գնահատականները նշանակվում են՝ 20 բալային համակարգից գնահատականները վերածելով 10 բալային համակարգի: Բանավոր քննությունները գնահատվում են 10 բալային համակարգով և համարվում են տարեկան գնահատականներ:

6. Գնահատականները գրանցելիս գնահատման 20 բալային համակարգից 10 բալային համակարգին անցման համապատասխանությունը կատարվում է համաձայն հետևյալ սանդղակի.

8-9 միավոր-4	16-17 միավոր-8
10-11 միավոր-5	18-19 միավոր-9
12-13 միավոր-6	20 միավոր-10
14-15 միավոր-7	

7. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպվում և անցկացնելու գործընթացը համակարգում է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

8. Դրսեկության ձևով (էքստեռն) ավարտական քննությունները կազմակերպվում են «Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու» կարգի և սույն աշխատակարգի պահանջների համաձայն:

Հավելված 2

Արցախի Հանրապետության  
կրթության, գիտության, մշակույթի և  
սպորտի նախարարի  
2022 թ. N 7/Մ հրամանի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ  
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՉՄԱԿԵՐՊՄԱՆ  
(ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ ԶԵՆԱՐԳՆԱՆ)

Առարկա	Քննության անցկացման եղանակը	Քննությունների անցկացման օրերը
1. Ֆիզիկա	Նորմատիվների հանձնում	15.02.2022թ.
2. Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	16.02.2022թ.
3. ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	17.02.2022թ.
4. Հասարակագիտություն	բանավոր	18.02.2022թ.
5. Ինֆորմատիկա	բանավոր	21.02.2022թ.
6. Հայաստանի աշխարհագրություն	գրավոր	22.02.2022թ.
7. Կենսաբանություն	գրավոր	23.02.2022թ.
8. Համաշխարհային պատմություն	գրավոր	24.02.2022թ.
9. Ֆիզիկա	գրավոր	25.02.2022թ.
10. Քիմիա	գրավոր	28.02.2022թ.
11. Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	գրավոր	01.03.2022թ.
12. Աշխարհագրություն	գրավոր	02.03.2022թ.
13. Ռուսաց լեզու	գրավոր	03.03.2022թ.
14. «Ռուս գրականություն» (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	04.03.2022թ.

Քննությունների սկիզբը՝ ժամը 13:00-ին

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ  
ԷՔՍՏՈՆ ԿԱՐԳՈՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՏԵՏՍՍՍ ՍՏԱՆԱԼՈՒ  
ՀԱՄԱՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՉՄԱԿԵՐՊՄԱՆ  
(ՓԵՏՐՎԱՐ-ՄԱՐՏ ԶԵՆԱՐԳՆԱՆ)

Առարկա	Քննության անցկացման եղանակը	Քննությունների անցկացման օրերը
1. Ֆիզիկա	Նորմատիվների հանձնում	15.02.2022թ.
2. Հայոց եկեղեցու պատմություն	բանավոր	16.02.2022թ.
3. ՆԶՊ և անվտանգ կենսագործունեություն	բանավոր	17.02.2022թ.
4. Հասարակագիտություն	բանավոր	18.02.2022թ.
5. Ինֆորմատիկա	բանավոր	21.02.2022թ.
6. Համաշխարհային պատմություն	գրավոր	22.02.2022թ.
7. Կենսաբանություն	գրավոր	23.02.2022թ.
8. Ֆիզիկա	գրավոր	25.02.2022թ.
9. Քիմիա	գրավոր	28.02.2022թ.
10. Օտար լեզու (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)	գրավոր	01.03.2022թ.
11. Աշխարհագրություն	գրավոր	02.03.2022թ.
12. Ռուսաց լեզու	գրավոր	03.03.2022թ.
13. Ռուս գրականություն (ռուսերենով ուսուցում ստացած դրսեկների համար)	բանավոր	04.03.2022թ.

Քննությունների սկիզբը՝ ժամը 11:00-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԿԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ԿԱՆՈՒՄԱՆ ԿԱՆՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵ

Այս կազմով ընտրվել են հայտարարված և մրցույթի մասնակցությունը հայտարարված և մրցույթի մասնակցությունը հայտարարված...

Մրցույթի մասնակցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով...

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

- 1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է: (Ձև 1),
2. Փաստաթուղթ (դիվանդակ) «Հանրակրթության մասին» ԼՂՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային...

ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ԼՂՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև փետրվարի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից՝ համապատասխան հանրակրթական ուսումնական հաստատությունում:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթները տեղի կունենան 2022թ. փետրվարի 28-ից մարտի 4-ն ընկած ժամանակահատվածում: Մանրամասն տեղեկությունների համար դիմել համապատասխան ուսումնական հաստատություն:

Table with 4 columns: №/№, Դպրոցը, Առարկան, Ժամաքանակը. It lists subjects like 'Հայրենիք' and 'Մաթեմատիկա' with their respective durations.

ԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՆՈՒՐ-ՎԱՃԱՆՔ

«Սնանկության մասին» ԱՀ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ 2022թ. մարտի 1-ին ժամը 12:00-ին «Մայակ» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Ա. Խաչատրյանի կողմից, ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ-վաճառք հետևյալ լոտերով.

ԼՈՏ 1. Կաթսայատուն (փաստացի՝ հացի արտադրամաս): Սեփականության վկայականի համար՝ 115352: Սեփականատեր՝ Էդգար Լավրենտի Միրզոյան, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ- պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը, շենքի մակերեսը կազմում է 166,16 քառ. մ. հողամասի մակերեսը կազմում է 307,0 քառ. մ: Վիճակը՝ նորմալ: Հասցե՝ ԱՀ ք. Ստեփանակերտ, Ազատամարտիկների փ. թիվ 52/11: Սեկնարկային գին՝ 36.500.000 ՀՀ դրամ:

Լոտ 2. Գրասենյակ: Սեփականության վկայականի համար՝ 081575: Սեփականատեր՝ Արզամ Լավրենտի Միրզոյան, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ- պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը, շենքի մակերեսը կազմում է 11,89 քառ. մ: Վիճակը՝ միջին: Հասցե՝ ԱՀ ք. Ստեփանակերտ, Ա. Մանուկյան փ. թիվ 10: Սեկնարկային գինը՝ 1.800.000 ՀՀ դրամ:

Լոտ 3. Հողամաս: Սեփականության վկայականի համար՝ 094690: Սեփականատեր՝ Արզամ Լավրենտի Միրզոյան, գրավադրված է «Մայակ» ՍՊԸ- պարտքերի դիմաց: Լոտի նկարագրությունը, հողամասի մակերեսը կազմում է 1410,0 քառ.մ: Վիճակը՝ լավ: Հասցե՝ ԱՀ ք. Ստեփանակերտ Ստարովոյտովա փ.: Սեկնարկային գինը՝ 17.200.000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ դեպքում անձնագրի պատճենը, իսկ ԻԱ դեպքում՝ պետ. գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախավճարը կազմում է մեկնարկային գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Արցախբանկ» ՓԲԸ «Տիգրանակերտ» մ/դ հ/հ 22301050288600:

Աճուրդին մասնակցելու ցանկացողները աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա 16.00, կարող են հայտ ներկայացնել սնանկության գործով կառավարիչին՝ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կրելու է գույքի ձևակերպման, գրանցման և գույքահարկի պարտքերի վճարման պարտավորությունները: Մանրամասներին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանին, հեռ.՝ 097-22-29-22 կամ 093-89-22-79»:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա. Խաչատրյան

ԴԱՍԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ԱՆՈՒՐ-ՎԱՃԱՆՔ

«Սնանկության մասին» ԱՀ օրենքի 89-րդ հոդվածի համաձայն՝ 2022թ-ի մարտի 1-ին ժամը 15:00-ին «Հ.Է.Կ. Շին» ՓԲԸ (ՀՎՀՀ 90282922) սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի կողմից, ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի՝

ք.Ստեփանակերտ, Ազատամարտիկների 42 հասցեում հայտարարվում է դասական եղանակով աճուրդ վաճառք հետևյալ, որպես մեկ միասնական ամբողջություն, գույքը 1 լոտով, 153.830.000 ՀՀ դրամ մեկնարկային գնով՝

• Հողամաս և շինություն՝ հեկի հյուսիսային հատվածում գտնվող պատվար և պարզարան Ծածկագիր 05-029-0962-0004 1000 քմ հողամաս, 9,86 ք.մ. պատվար, 20,36ք.մ. պարզարան

Գեղարքունիք, Գեղամասար, Դարանակ բնակավայր, Ամառանոցային փողոց, թիվ 1 • Հողամաս և շինություն՝ հեկի հարավային հատվածում գտնվող պատվար և պարզարան 05-029-0142-0003 1001 քմ հողամաս, 6,41 ք.մ. պատվար, 6,35ք.մ. պարզարան

Գեղարքունիք, Գեղամասար, Դարանակ բնակավայր, Եղնիկի ձոր 1 • Հողամաս և շինություն՝ հեկի այն հատվածը, որտեղ մոնտաժված են ագրեգատները 05-029-0119-0003 2004 քմ հողամաս, 139,28 ք.մ շինություն Հ.Է.Կ

Գեղարքունիք, Գեղամասար, Դարանակ բնակավայր, Դրախտավայր 1 • Հողամասեր՝ հեկի խողովակաշարերի հատվածներ Գեղարքունիք, Գեղամասար, Դարանակ բնակավայր 05-029-0119-0004 1584 քմ

05-029-0102-0002 10220 քմ 05-029-0102-0003 8777 քմ 05-029-0104-0002 17000 քմ 05-029-0142-0002 20016 քմ • Հողամաս՝ հեկի ագրեգատներից դեպի գյուղ ընկած հատված Գեղարքունիք, Գեղամասար, Դարանակ բնակավայր 05-029-0119-0002 3763 քմ

Վերը ներկայացված 9 հատ հողամասերի, ինչպես նաև դրանցից 3-ում առկա շինությունների նկատմամբ գրանցված է «Հ.Է.Կ. Շին» ՓԲԸ սեփականության իրավունքը, ինչպես նաև գրանցված է գրավի իրավունք (սահմանափակում): Շինությունները ունեն մաշվածություն և ենթակա են ընթացիկ վերանորոգման:

- Շարժական գույք՝ - յուղային տրանսֆորմատոր SU 160/6/0.4, 1 հատ - յուղային տրանսֆորմատոր SU 1000/10/6000, 1 հատ - վահանակ էլեկտրական ԿՍՕ 272 5 հատ, \* կառավարման էլեկտրական վահանակ, 1 հատ - եռաֆազ հաշվիչ 4 հատ, - հիդրոտուրբին Պելտոն կամ Շերեփավոր 660 ԿՎԱ 1 հատ, - հիդրոտուրբին Պելտոն կամ Շերեփավոր 374 ԿՎԱ 1 հատ, - զենեքատոր սինխրոն շարժիչ 800 ԿՎԱ 600 պտտ/րոպե 1 հատ,

- զենեքատոր սինխրոն շարժիչ 200 ԿՎԱ 600 պտտ/րոպե 1 հատ, - զրգռման համակարգ սինխրոնիկ ՎՏ-320/45 սեփական կարիքների համար 0,4 վահանակ 1 հատ, - մուտքային վահանակ 6000 ԿՎՏ 1 հատ, - 2000 գծամետր 630 մմ Մ պատերի հաստությունը 7մմ, 2000 գծամետր 530 մմ Մ պատերի հաստությունը 7մմ, - էլեկտրահաղորդման օղային գիծ՝ 600 գծմ փականներ, յուղային անջատիչներ, և այլն

Վերը ներկայացված շարժական գույքերը հանդիսանում են «Հ.Է.Կ. Շին» ՓԲԸ սեփականություն, գտնվում են ՀՀ գ.Դարանակում, ինչպես նաև գրանցված է գրավի իրավունք (սահմանափակում): Գույքերն ունեն մաշվածություն և ենթակա է ընթացիկ վերանորոգման:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ ՖԱ դեպքում անձնագրի պատճենը, իսկ ԻԱ դեպքում՝ պետ.գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները, աճուրդի մասնակցության նախավճարի վճարումը հավաստող փաստաթղթերը: Նախավճարը կազմում է աճուրդում վաճառվող լոտի գնի 5 տոկոսը, որը փոխանցվում է սնանկության հատուկ հաշվին՝ «Հայքիզնեսբանկ» ՓԲԸ հ/հ 1150008102062091:

Աճուրդին մասնակցելու ցանկացողները, աճուրդին նախորդող 5 օրվա ընթացքում, ընդհուպ մինչև աճուրդին նախորդող օրվա 16.00, կարող են հայտ ներկայացնել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, մասնակցի վկայական ստանալու համար: Աճուրդում հաղթող է համարվում աճուրդում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Գնորդը կատարում է գույքի ձևակերպման, գրանցման հետ կապված ծախսերը: Մանրամասներին և կանոնակարգին ծանոթանալու համար դիմել սնանկության գործով կառավարիչ՝ Ա.Խաչատրյանին հեռ.093-89-22-79»:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա. Խաչատրյան

ՍԿՎԱԾ Ե ԼՈՒՃԱՐՍԱՆ ՎՈՐՈՒՅՑ

«ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի 24.01.2022թ. որոշմամբ «ԱՐՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի նկատմամբ սկսված է լուծարման վարույթ»:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա. Խաչատրյան

ՍԿՎԱԾ Ե ԼՈՒՃԱՐՍԱՆ ՎՈՐՈՒՅՑ

«ԱՀ ԸԻ առաջին ատյանի դատարանի 21.01.2021թ. որոշումներով Բորիս Գեորգիի Սկիկյանի և Կարո Զրաչի Պետրոսյանի նկատմամբ սկսված է պարտավորությունների կատարումից ազատելու (լուծարման) վարույթ»:

Սնանկության գործով կառավարիչ՝ Ա. Խաչատրյան

ԿՈՐԵԼ Է \*\*\* ԱՀ Հաղորդք քաղաքի Գ. Լժդեհ փ. 3 բն. 1 հասցեում հաշվառված Յանիան Կարենի Միրզոյանին պատկանող «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի կողմից 2009թ. տրված «Նկարիչ-մոդելավորող» մասնագիտության դիպլոմը: Համարել անվավեր: \*\*\* Բելլա Սերգեյի Օատրյանի ԱԱ 193489 համարի առեստատը՝ տրված 2019թ. Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի կողմից: Համարել անվավեր: \*\*\* Արեն Վահագնի Գրիգորյանի՝ 8-ամյա կրթության Ա 115923 համարի վկայականը՝ տրված Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցի կողմից 2001թ.: Համարել անվավեր:

ՀՈՒՄԱՐԱՐ ԽՍՐԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ ✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru: www.lusarar.info Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրազրույթում վարելու պարտավորություն չի ստանձնում: Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլուս» ՍՊԸ-ում: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 9.02.2022թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: